2025, ՀՈՒԼԻՍ Ա, ԹԻՎ 13 (681)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Հայտարարություն

Մենք՝ Հայաստանում և Սփյուռքում պաշտոնավարող եպիսկոպոսներս և թեմական առաջնորդներս, Տիրոջ կամքով համախմբված հայոց սրբություն սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, գոհություն և փառք ենք մատուցում Ամենակարող Աստծուն՝ ծառայական մեր ուխտը վերանորոգելու այս առիթի համար:

Վերահաստատում ենք անսակարկ մեր սերը, հավատարմությունը և ամբողջանվեր ծառայությունը Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսին, Սուրբ Թադեոս և Սուրբ Բարդուղիմեոս առաքյալների քարոզությամբ հաստատված Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն և Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Հայրապետի տեսիլքով նվիրագործված քրիստոսահիմն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին:

Խորապես վրդովված ենք Հայոց Եկեղեցու, Ամենայն Հայոց Կաթողիկոսի ու բարձրաստիճան եկեղեցականների նկատմամբ ՀՀ իշխանությունների և անձամբ վարչապետի հրահրած պախարակելի արշավի առնչությամբ, որն ուղեկցվում է հոգևորականների հանդեպ ատելության ու թշնամանքի տարածմամբ և անձնական բնույթի վիրավորանքներով ու անարգալից արտահայտություններով:

Հակաեկեղեցական այս արշավը ոչ այլ ինչ է, եթե ոչ աղետաբեր հարված հայ ժողովրդին և հայոց պետականությանը՝ հատկապես ազգային կյանքում և Հայաստանի շուրջ ծավալվող գոյաբանական մարտահրավերների համատեքստում: Հայոց Եկեղեցու տկարացումն ու հեղինակազրկումը կարող են ձեռնտու լինել միայն հակահայկական ուժերին և հայության թշնամիներին:

Խստորեն դատապարտում ենք տարվույս հունիս 27-ին ուժային կառույցների ներկայացուցիչների ներխուժումը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածք՝ Գերաշնորհ Տ. Միքայել արքեպիսկոպոս Աջապահյանին ձերբակալելու՝ եկեղեցականների և հավատացյալների նկատմամբ բռնի գործողություններ իրականացնելու սպառնալիքով: Տարակուսանք է առաջացնում Միքայել արքեպիսկոպոսին հարկադրաբար բերման ենթարկելու որոշումը, երբ նա պատրաստակամություն էր հայտնել կամովին ներկայանալու իրավապահ մարմիններին, ինչը և տեղի ունեցավ:

Իշխանությունների հակաեկեղեցական քաղաքականության ցայտուն դրսևորումներից է նաև ազգային բարերար տիար Սամվել Կարապետյանի ազատազրկումը, որը կապված է Հայոց Եկեղեցին պաշտպանելու նրա հայտարարության հետ:

Իշխող քաղաքական ուժի համակարգված քարոզչության պայմաններում ծանր մեղադրանքներով հարուցվեց քրեական հետապնդում, և ազատությունից զրկվեց նաև Գերաշնորհ Տ. Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանը:

Հոգևոր մեր եղբայրների, ազգային բարերարի և նրանց հետ կապակցվող մեր հայրենակիցների նկատմամբ հետապնդումները բացահայտորեն ուղեկցվում են իշխող քաղաքական ուժի բարձրաստիճան պաշտոնատար անձանց հրապարակային ուղղորդումներով և ատելության խոսքի տարածմամբ՝ մինչ դատարանի դատավճիռը արդեն իսկ մեղավորներ կարգելով նրանց: Իշխանության նման գործելաոճը կոպտորեն ոտնահարում է ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված անմեղության կանխավարկածի և իշխանությունների բաժանման սկզբունքները, բացահայտում է, որ գործընթացն ունի քաղաքական դրդապատճառներ, որով և կասկածի տակ է դրվում դրա օրինականությունը:



Հորդորում ենք ՀՀ իշխանություններին՝ անհապաղ ազատ արձակել հոգևոր մեր եղբայրներին, ազգային բարերարին և նրանց հետ կապակցվող մեր հայրենակիցներին և գործել բացառաբար օրենքի շրջանակներում՝ ապահովելով նրանց արդար դատաքննության իրավունքը:

Անհանդուրժելի ենք համարում ինչպես իշխանության, այնպես և որևէ մեկի ոտնձգությունը՝ ուղղված Հայրապետական Աթոռին և եկեղեցական կանոնական սկզբունքներին:

Որդիական խոնարհությամբ եպիսկոպոսաց դասս և թեմական առաջնորդներս մեր հավատարմությունն ենք հայտնում Հայոց Եկեղեցու ազգընտիր գահակալին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Հայոց Եկեղեցին, բարձրագույն մարմին ունենալով Ազգային-Եկեղեցական ժողովը, հետայսու ևս ղեկավարվելու է դարերով սրբագործված իր ընթացակարգերով՝ բացառելով արտաքին որևէ միջամտություն:

Հայոց Եկեղեցու հոգևոր դասը Հայաստանում և ի սփյուռս շարունակելու է տարածել Հիսուս Քրիստոսի ճշմարիտ վարդապետությունը և հոգևոր ու ազգային ոգով կրթել մեր ժողովրդի զավակներին՝ հոգածու և պատշաճ արձագանքելով թե՛ ներազգային ու ներպետական, թե՛ արտաքին մարտահրավերներին՝ իրացնելով ճշմարտության խոսնակ լինելու Տերունի պատգամը (հմմտ. Հովհ. 8.32):

Կոչ ենք ուղղում մեր Սուրբ Եկեղեցու զավակներին՝ հաստատուն մնալ առ Աստված հավատքի մեջ, հավատարիմ՝ ազգային սրբությունների ու նվիրական արժեքների պաշտպանության դիրքերում և չտրվել պառակտիչ գործողությունների:

Աղոթում ենք, որ երկնավոր Տերը խաղաղության մեջ արդար, բարօր և ապահով պահի Հայաստան մեր հայրենիքն ու աստվածօրհնյալ հայ ժողովրդին, անսասան՝ Իր իսկ հիմնած Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, որը հենասյունն է հայոց ինքնության և պետականության, ու ծաղկյալ՝ Հայրապետական գավազանը Հայոց Հայրապետի:

4.07.2025 թ.
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Մայր Աթոռում տեղի ունեցավ քահանայից ժողով

Հուլիսի 11-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, տեղի ունեցավ քահանայից տարեկան ժողովը, որին մասնակցում էին հայաստանյան թեմերի առաջնորդները, Մայր Աթոռի միաբանները, թեմերում և եկեղեցական կառույցներում սպասավորող 215 քահանա հայրեր:

Եկեղեցականաց դասը նախ Մայր Տաճարում մասնակցեց Ճաշու ժամերգությանը, որից հետո Գևորգյան հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում ժողովն սկսեց իր աշխատանքը: Տերունական աղոթքից հետո ներկաներին ողջունեց Գերաշնորհ Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանը, որը Վեհափառ Հայրապետի օրհնությամբ նշանակված է փոխարինելու Գերաշնորհ Տ. Միքայել արքեպիսկոպոս Աջապահյանին՝ որպես քահանայից հավաքների կազմակերպիչ հանձնախմբի նախագահ:

Այնուհետև ժողովական եկեղեցականներին իր հայրական օրհնությունն ու պատգամը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ ընդգծելով, որ հունիսի 27-ին ծրագրված հավաքը հնարավոր չեղավ անցկացնել ուժային կառույցների ներկայացուցիչների՝ Գերաշնորհ Տ. Միքայել արքեպիսկոպոս Աջապահյանին ձերբակալելու նպատակով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ձեռնարկած անընդունելի գործողությունների պատճառով:

➥ էջ 2

Հայտարարություն քահանայից հավաքի

Մենք՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հայաստանյան թեմերում սպասավորող քահանաներս, գոհություն ենք հայտնում Երկնավոր մեր Տիրոջը, որ բարձր նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ առիթն ունեցանք համախմբվելու Միածնաէջ Սուրբ Էջմիածնում, միասնաբար խորհրդածելու սրբազան մեր առաքելության շուրջ և աղոթք բարձրացնելու աշխարհասփյուռ հավատավոր մեր ժողովրդի և հայրենիքի համար:

Խորապես մտահոգված ենք հայրենի մեր երկրում տեղ գտնող վերջին օրերի ցավալի զարգացումներով: Աշխարհաքաղաքական բարդ իրողությունների պայմաններում ամենատարբեր պատճառաբանություններով երկրում իրականացվող քաղաքական հետապնդումները և այդ շրջագծում ՀՀ վարչապետի ու իշխող ուժի ներկայացուցիչների կողմից սանձազերծված արշավը Հայոց Եկեղեցու և եկեղեցականության դեմ խաթարում են ազգային կյանքը, առկա մարտահրավերներին հանդիման ջլատում մեր ժողովրդի միասնականությունը և տկարացնում մեր պետության դիրքերը աշխարհի համայնապատկերում:

Սուրբ Եկեղեցու նկատմամբ Հայաստանի Հանրապետության իշխանությունների դրսևորած անհարիր վարքագիծն ու անպարկեշտ խոսույթը, շարունակական սպառնալիքները և հոգևորականության պառակտման անթաքույց փորձերը վիրավորում են ի սփյուռս աշխարհի մեր հավատացելոց ազնիվ զգացումները, նաև ուղղակիորեն ոտնահարում ՀՀ Սահմանադրության, «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքի և միջազգային բազում պահանջներ:

➥ էջ 2

Մայր Աթոռում տեղի ունեցավ քահանայից ժողով

➥ էջ 1

Նորին Սրբությունը նշեց, որ քահանայից հավաքը առիթ է խորհրդածելու ազգային-եկեղեցական կյանքում առկա հիմնախնդիրների, ինչպես նաև Եկեղեցու շուրջ վերջին մտահոգիչ զարգացումների, եկեղեցականաց դեմ իրականացվող հարձակումների և երկու Սրբազանների ու ազգային բարերար տիար Սամվել Կարապետյանի կալանավորման վերաբերյալ:

«Ներկայիս բարդ ժամանակներում հոգևորականներս կոչված ենք ոչ միայն հոգեփրկչական մեր առաքելությունն իրականացնելու, այլև, ցավալիորեն, դիմագրավելու հակաեկեղեցական հարձակումներին: Սակայն մենք հավատքով ու ոգով ամուր ենք մնում՝ համաձայն սուրբգրային խոսքի. «Նեղությունները համբերություն են բերում, համբերությունը՝ փորձառություն, փորձառությունը՝ հույս: Հույսը երբեք չի ամաչեցնում, որովհետև Աստծու սերը սփռված է մեր սրտերում» (Հռոմ. 5.3–5):

Սիրելի՛ հոգևոր հայրեր, աշխարհում և մեր տարածաշրջանում ընթացող զարգացումները լուրջ խնդիրների առջև են կանգնեցրել մեր երկիրն ու ժողովրդին: Մենք խորապես մտահոգված ենք, որ փոխանակ համայն հայությանը համախմբելու, հասարակության մեջ անջրպետները վերացնելու՝ Հայաստանի իշխանությունները շարունակում են արշավ իրականացնել Եկեղեցու նկատմամբ: Որքան էլ փորձ կատարվի Եկեղեցու դեմ քայլերը ներկայացնելու որպես առանձին եկեղեցականների հանդեպ ուղղված գործողություններ, այսուհանդերձ, ակնհայտ է, որ դրանք կրում են համակարգային բնույթ, և թիրախավորված է բուն Եկեղեցին»,— ասաց Վեհափառ Հայրապետը՝ նկատելով, որ այդ ամենի մասին են վկայում վերջին տարիներին Եկեղեցու առաքելության համար տարբեր ոլորտներում հարուցված խոչընդոտներն ու արհեստական դժվարությունները:

Նորին Սրբությունը նշեց, որ հակաեկեղեցական այս արշավը լուրջ սպառնալիք է մեր անկախ պետականությանը, մեր ժողովրդի միասնականությանը, հարված՝ մեր երկրի և Հայոց Եկեղեցու բարի համբավին:

Անդրադառնալով նաև անցնող օրերին իշխանության կողմից եկեղեցականաց միասնականությունը խաթարելու և միմյանց դեմ տրամադրելու քայլերին՝ Ամենայն Հայոց Հայրապետն արձանագրեց. «Մեր Սուրբ Եկեղեցում ողջամտությունը, եղբայրական ոգին, միաբանությունը գերակա են, քանզի կոփված են դարերի ընթացքում և ուժ են առնում մեր բազմադարյա պատմությունից ու փորձառությունից: Այս բարձր գիտակցությամբ են մեր Սուրբ Եկեղեցու սպասավորները դիմագրավել ու դիմագրավում փորձություններին՝ յուրաքանչյուրն ըստ իր շնորհի և կարողության ծառայելով Աստծուն, ազգին ու հայրենիքին»: Ըստ Նորին Սրբության՝ Հայոց Եկեղեցին՝ իր հոգևոր դասով, չի կարող լուռ ու անտարբեր մնալ ազգային ինքնությանն ու հայրենիքի անվտանգությանն ուղղված սպառնալիքների, պատմության խեղաթյուրման երևույթների հանդիման, անտեսել մեր պետության ու ժողովրդի շահերը, չի կարող չբարձրաձայնել արցախահայության ոտնահարված իրավունքների և Բաքվում գերության մեջ անօրինաբար պահվող մեր զավակների նկատմամբ գործադրվող անարդարությունների մասին:

Վեհափառ Հայրապետը հորդորեց եկեղեցականներին անվհատ ու ամուր մնալ իրենց ծառայության մեջ, առավել զորացնել հավատացելոց հոգևոր խնամքն ու աղոթական միջավայրի խաթարումը և Ամենայն Հայոց Հայրապետի ու հոգևոր դասի նկատմամբ նման վերաբերմունքը խստորեն դատապարտելի և մերժելի են:

Թշնամանքի և ատելության խոսքը, խտրականության քարոզչությունը և տարատեսակ բռնության կոչերը վտանգաշատ ու կործանարար են և երբեք չեն կարող բարիք պարգևել ազգային և հայրենական մեր կյանքին: Հայոց Եկեղեցու նվիրապետության, մեր նվիրական արժեքների ու սրբությունների թիրախավորումը անընդունելի է և անհանդուրժելի՝ հղի ազգի և հայոց ապագայի համար անդառնալի հետևանքներով: Հարկ չկա հայրենիքը և մեր ժողովրդին կանգնեցնելու նոր ցնցումների և արհավիրքների առջև:

Քաջ գիտակցելով Հայոց Եկեղեցու առաքելությունը մեր ազգի միասնականության պահպանման, հանրային համերաշխության կերտման և հայոց պետականության զորացման գործում՝ իբրև հոգևոր հովիվներ անսասան ենք մեր կոչման մեջ՝ ծառայելու Փրկիչ մեր Տիրոջը և Նրա կենսատու Սուրբ Ավետարանի քարոզչությանը, հայ ժողովրդի հոգևոր կյանքի պայծառությանը, ազգային անդաստանում տերունահաստատ ճշմարտության և արդարության պաշտպանությանը: Այս հարձակումների հորձանուտում մեր համայնքների հետ միասին պիտի անհողդողդ պաշտպանենք իրավունքները մեր Սուրբ Եկեղեցու, նաև հետամուտ լինենք կալանավորված Սրբազան Հայրերի և ազգայինների նկատմամբ արդարության իրագործմանն ու ազատ արձակմանը:

Անդրդվելիորեն պիտի շարունակենք մեր ժողովրդի մեջ առատացնել հավատը, հույսն ու սերը, ամրապնդել հավատարմությունը մեր Սուրբ Եկեղեցու, ազգային-հոգևոր արժեքների նկատմամբ, որոնց շնորհիվ, ինչպես դարերի հոլովույթում, կարող պիտի լինենք հաղթահարել մեր կյանքի բոլոր դժվարություններն ու փորձությունները:

Հավատարիմ մյուռոնաբաշխ Սուրբ Էջմիածնին՝ մեր որդիական ջերմ նվիրումի, հավատարմությամբ և նախանձախնդրությամբ ծառայության համար՝ երկնավոր Տիրոջից հայցելով խաղաղություն մեր երկրին ու համայն աշխարհին, ապահովություն ու անվտանգություն՝ մեր պետությանը, համերաշխություն ու միաբանություն՝ մեր ժողովրդին ի Հայաստան և ի սփյուռս:

Ապա ժողովի ընթացքում եկեղեցի—պետություն հարաբերությունների, իշխանությունների եկեղեցահալած քաղաքականության և եկեղեցականների դեմ թշնամանքի ու ատելության խոսքի, մարդու իրավունքների վերաբերյալ զեկույցներ ներկայացրին Մայր Աթոռի Դիվանատան եկեղեցական ժողովական կառույցների գրասենյակի տնօրեն Արժանապատիվ Տ. Մովսես քահանա Սահակյանն ու Իրավունքի և արդարության կենտրոն «Թաթոյան» հիմնադրամի տնօրեն տիար Արման Թաթոյանը:

Զեկույցների շուրջ ծավալվեցին քննարկումներ, եկեղեցականները ներկայացրին իրենց դիտարկումներն ու առաջարկները և հանդես եկան հայտարարությամբ:

Ժողովի ավարտին հոգևորականաց դասը մասնակցեց Երեկոյան ժամերգությանը:

Հայտարարություն քահանայից հավաքի

➥ էջ 1

Դատապարտելի է ի պաշտպանություն Հայոց Եկեղեցու հանդես եկած ազգային բարերար տիար Սամվել Կարապետյանին ազատությունից զրկելը: Անընդունելի է նաև կալանավորված Տ. Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանի և նրա համախոհների պարագայում անմեղության կանխավարկածի սկզբունքի միտումնավոր անտեսումը իշխանությունների կողմից: Մեծ ընդվզումով և ցավով ականատեսը դարձանք հունիսի 27-ին Տ. Միքայել արքեպիսկոպոս Աջապահյանին ազատությունից զրկելու նպատակով Սուրբ Էջմիածին իրավապահ մարմինների մեծաքանակ ուժերի ներխուժմանը: Հակառակ տրված հավաստիացումներին, որ Սրբազան Հայրն ինքնակամ կներկայանա Քննչական կոմիտե քահանայից հավաքի ավարտին՝ ժամը 16:00-ին, իրավապահները նախընտրեցին ծրագրածն իրագործել անհամաչափ բռնի ուժի կիրառմամբ, ինչն արդարորեն առաջ բերեց ամենքիս բողոքը՝ նաև խոչընդոտելով ամենամյա մեր հավաքի անցկացմանը: Միքայել Սրբազանը Քննչական կոմիտե մեկնեց ինքնակամ: Համայն հայության Սրբություն Սրբոցի նկատմամբ սույն ոտնձգությունը, սրբավայրի խաթարումը և Ամենայն Հայոց Հայրապետի ու հոգևոր դասի նկատմամբ նման վերաբերմունքը խստորեն դատապարտելի և մերժելի են:

Թշնամանքի և ատելության խոսքը, խտրականության քարոզչությունը և տարատեսակ բռնության կոչերը վտանգաշատ ու կործանարար են և երբեք չեն կարող բարիք պարգևել ազգային և հայրենական մեր կյանքին: Հայոց Եկեղեցու նվիրապետության, մեր նվիրական արժեքների ու սրբությունների թիրախավորումը անընդունելի է և անհանդուրժելի՝ հղի ազգի և հայոց ապագայի համար անդառնալի հետևանքներով: Հարկ չկա հայրենիքը և մեր ժողովրդին կանգնեցնելու նոր ցնցումների և արհավիրքների առջև:

Քաջ գիտակցելով Հայոց Եկեղեցու առաքելությունը մեր ազգի միասնականության պահպանման, հանրային համերաշխության կերտման և հայոց պետականության զորացման գործում՝ իբրև հոգևոր հովիվներ անսասան ենք մեր կոչման մեջ՝ ծառայելու Փրկիչ մեր Տիրոջը և Նրա կենսատու Սուրբ Ավետարանի քարոզչությանը, հայ ժողովրդի հոգևոր կյանքի պայծառությանը, ազգային անդաստանում տերունահաստատ ճշմարտության և արդարության պաշտպանությանը: Այս հարձակումների հորձանուտում մեր համայնքների հետ միասին պիտի անհողդողդ պաշտպանենք իրավունքները մեր Սուրբ Եկեղեցու, նաև հետամուտ լինենք կալանավորված Սրբազան Հայրերի և ազգայինների նկատմամբ արդարության իրագործմանն ու ազատ արձակմանը:

Անդրդվելիորեն պիտի շարունակենք մեր ժողովրդի մեջ առատացնել հավատը, հույսն ու սերը, ամրապնդել հավատարմությունը մեր Սուրբ Եկեղեցու, ազգային-հոգևոր արժեքների նկատմամբ, որոնց շնորհիվ, ինչպես դարերի հոլովույթում, կարող պիտի լինենք հաղթահարել մեր կյանքի բոլոր դժվարություններն ու փորձությունները:

Հավատարիմ մյուռոնաբաշխ Սուրբ Էջմիածնին՝ մեր որդիական զորակցությունն ենք հայտնում Հայոց Հովվապետին՝ Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ փոթորկալի այս ժամանակներում, իբրև բարի և քաջ հովիվ, տերունաշնորհ իմաստությամբ, հանդարտությամբ և մշտարթուն հոգով առաջնորդելու Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին և համայն հավատավոր մեր ժողովրդին դեպի խաղաղ ու ապահով հանգրվաններ:

Առ Աստված ապավինությամբ հայցում ենք, որ Տերն Իր Ամենախնամ Աջը տարածի աշխարհասփյուռ մեր ժողովրդի վրա՝ խաղաղ և անվրդով պահելով մեր հայրենիքը, աներեր և պայծառ՝ Իր Սուրբ Եկեղեցին:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Հուլիսի 2-ին

Մալթայի Ինքնիշխան Մարտական Ուխտի դեսպանին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Մալթայի Ինքնիշխան Մարտական Ուխտի արտակարգ և լիազոր դեսպան Դոմենիկո Արդուինիին:

Հանդիպմանը Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակություն հայտնեց Հայաստանում Մալթայի Ինքնիշխան Մարտական Ուխտի կողմից իրականացվող մարդասիրական առաքելության առնչությամբ: Հատկապես այս ծանր ու դժվարին օրերին Նորին Սրբությունը կարևոր նկատեց միջազգային կառույցների ու կազմակերպությունների աջակցությունն ու զորակցությունը հայ ժողովրդին:

Իր հերթին դեսպան Դոմենիկո Արդուինին Հայոց Հովվապետին տեղեկացրեց, որ Մալթայի Ինքնիշխան Մարտական Ուխտը նախատեսում է ընդլայնել գործունեությունը Հայաստանում՝ ծրագրեր իրականացնելով նաև սոցիալական, կրթական ու տնտեսական ոլորտներում:

➥ էջ 3

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

էջ 2



Հուլիսի 8-ին

Հայագիտական և կրոնագիտական դասընթացներին մասնակից սփյուռքահայ երիտասարդներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կազմակերպվող հայագիտական և կրոնագիտական դասընթացներին մասնակից սփյուռքահայ երիտասարդների երկրորդ խմբին:

Վեհափառ Հայրապետը, իր օրհնությունը բերելով տարբեր երկրներից ժամանած երիտասարդներին, կարևորեց նրանց համախմբումը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում և մասնակցությունը կրթական ծրագրին: Նորին Սրբությունը հորդորեց հայորդիներին ջանասիրությամբ մասնակից լինել դասընթացներին՝ զորացնելով հայոց լեզվի և պատմության իրենց իմացությունն ու հոգևոր գիտելիքները, ինչպես նաև հաղորդ դառնալով հայրենիքի հոգևոր-մշակութային ժառանգությանն ու արժեքներին:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսն Աստծու Սուրբ Աջի հովանին մաղթեց հայորդիներին՝ պատգամելով ամուր պահել իրենց կապը Եկեղեցու և հայրենիքի հետ՝ անխաթար պահպանելու իրենց ինքնությունը:

Հուլիսի 10-ին

ԱՄՆ հայոց արևելյան թեմի ուխտավորներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ հայոց արևելյան թեմի Բոստոնի Սուրբ Երրորդություն և Ուստրի Սուրբ Փրկիչ եկեղեցիների համայնքների ուխտավորներին՝ առաջնորդությամբ Բոստոնի Սուրբ Երրորդություն եկեղեցու հոգևոր հովիվ Արժանապատիվ Տ. Վազգեն քահանա Քուզոյանի և Ուստրի Սուրբ Փրկիչ եկեղեցու հոգևոր հովիվ Արժանապատիվ Տ. Թադեոս քահանա Բարսեղյանի:

Հայցելով Վեհափառ Հայրապետի օրհնությունը՝ քահանա հայրերն ընդգծեցին, որ ուխտավորները Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին են այցելել իրենց ուխտը վերանորոգելու և հայրենիքի հետ կապը զորացնելու նպատակով:

Նորին Սրբությունը, իր օրհնությունը բերելով ներկաներին, կարևորեց նմանօրինակ ուխտագնացությունների կազմակերպումը հայրենիք, որոնցով լավագույն առիթ է ընձեռվում սփյուռքի հայորդիներին հոգևոր նորոգության, հայրենաճանաչության և հայրենասիրական զգացումների զորացման համար:

Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ նաև արձանագրեց, որ Մայր Աթոռը սփյուռքահայ երիտասարդների համար կազմակերպում է հայագիտական դասընթացներ, որոնք նպատակ ունեն զորացնելու վերջիններիս՝ հայոց լեզվի և պատմության իմացությունն ու հոգևոր գիտելիքները, ինչպես նաև հաղորդ դարձնելու հայրենիքի հոգևոր-մշակութային ժառանգությանն ու արժեքներին:

Հանդիպմանը Հայոց Հովվապետը պատգամեց ներկաներին հավատքով զորացած վերադառնալ իրենց համայնքները և նախանձախնդրորեն մասնակից լինել Եկեղեցու հոգևոր ու ազգապահպան առաքելության իրականացմանը:

Վերջում Նորին Սրբությունը պատասխանեց նաև ուխտավորների հարցերին, որոնք առնչվում էին Եկեղեցի–պետություն ներկա հարաբերություններին և հոգևոր կյանքի ամրապնդմանն ու զորացմանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունը բաշխեց «Քրիստոնյա ընտանիքը հայ ինքնության խարիսխ» համահայկական ուխտագնացության մասնակիցներին

Հուլիսի 3-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ տեղի ունեցավ «Քրիստոնյա ընտանիքը հայ ինքնության խարիսխ» խորագրով համահայկական ուխտագնացության հանդիսավոր բացման արարողությունը:

2001 թ. քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու 1700-ամյակի շրջանակներում Ամենայն Հայոց Հայրապետի նախաձեռնությամբ և օրհնությամբ հիմնադրվեց Եկեղեցասեր երիտասարդաց գրասենյակը, որը հետագայում հիմք դարձավ Հայ Եկեղեցու համաշխարհային երիտասարդական միավորման (ՀԵՀԵՄ) ձևավորման:

Հուլիսի 2–7-ը համահայկական ուխտագնացությունը կազմակերպվել է ՀԵՀԵՄ-ի կողմից, որին մասնակցում են շուրջ 300 եկեղեցասեր երիտասարդներ՝ Նվիրապետական Աթոռներից, Հայրապետական պատվիրակություններից, Հայաստանի և Սփյուռքի տարբեր թեմերից:

Բացման հանդիսավոր արարողությանը մասնակցում էին Հայաստանի ու Սփյուռքի թեմական առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ:

Հանդիպումն սկսվեց Հայրապետական մաղթերգով, որից հետո ներկաներին ողջունեց ՀԵՀԵՄ հոգևոր առաջնորդ, ԱՄՆ հայոց արևմտյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը: Սրբազան Հայրն իր խոսքում անդրադարձավ ՀԵՀԵՄ 25-ամյա գործունեությանը՝ ընդգծելով, որ այն դարձել է Հայ Եկեղեցու առաքելական կյանքի կարևորագույն հանգրվաններից մեկը: Հովնան արքեպիսկոպոսն իր երախտագիտությունը հայտնեց նաև Նորին Սրբությանը 25 տարի առաջ կառույցի նախաձեռնման, մշտական հոգածության ու հայրական խնամքի համար:

Երիտասարդների անունից սրտի խոսք ասաց ԱՄՆ արևմտյան թեմի երիտասարդական միության ներկայացուցիչ Օվսաննա Ամրանը:

Այնուհետև ցուցադրվեց ՀԵՀԵՄ 25-ամյակին նվիրված «Շողակաթ» հեռուստաընկերության տեսանյութը:

Ապա ներկաներին հայրապետական իր պատգամն ու օրհնությունը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունն ուրախություն հայտնեց աշխարհի տարբեր կողմերից հայրենիքում՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքո, հայորդիների համախմբման առիթով՝ այն լավագույն առիթ նկատելով զորացնելու հավատքն առ Աստված և նվիրումն առ հայրենին, վերանորոգելու սերն ու նախանձախնդրությունը հանդեպ Սուրբ Եկեղեցին և ազգային ու հոգևոր արժեքները:

Հայոց Հայրապետն իր գոհունակությունը հայտնեց միության՝ թեմական երիտասարդական կազմակերպությունների համախմբման և գործունեության համակարգմանն ուղղված հետևողական աշխատանքի առնչությամբ:

«Գովելի է, որ շարունակվում են ջանքերը՝ մեծացնելու երիտասարդների ներգրավվածությունը ազգային ու եկեղեցական անդաստանում, ինչպես նաև հոգևոր կրթական ծրագրերով զորացնելու նրանց կրոնական իմացությունը:

Սիրասուն զավակներ Մեր, որտեղ էլ լինի՝ թե՛ Հայաստանում և թե՛ սփյուռքում, հոգևոր ու ազգային արժեհամակարգի պահպանությամբ ու դրան հավատարմությամբ է միայն հնարավոր հայ լինել, մնալ արժանավոր զավակը ազգի և Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու: Այս կառույցին և թեմերին կից երիտասարդական կազմակերպություններին անդամակցելով՝ հայորդիները առավել զորանում են աստվածասիրությամբ ու հայրենանվիրումով, պատրաստ լինում գովարժան հանձնառությունների մեր հավատքի, մշակույթի ու լեզվի պահպանության, այլև ազգային անդաստանում կարևոր դերակատարության»,– ասաց Վեհափառ Հայրապետը:

Անդրադառնալով այս օրերին հայրենիքի առջև ծառացած անվտանգային մարտահրավերներին, բռնի տեղահանված արցախահայության խնդիրներին, ներհասարակական ծայրաստիճան պառակտվածությունը, Հայաստանի իշխանությունների կողմից Հայ Եկեղեցու դեմ սանձազերծված քաղաքական արշավին, որի շրջանակներում կալանավորվեցին Միքայել և Բագրատ արքեպիսկոպոսները, ազգային բարերար տիար Սամվել Կարապետյանը, Ամենայն Հայոց Կաթողիկոսը նշեց. «Առկա մարտահրավերների հանդիման հրամայական է միասնական լինել և նախանձախնդիր՝ օրինականության պաշտպանության գործում, թույլ չտալ մեր Սուրբ Եկեղեցու հեղինակազրկումն ու նսեմացումը: Մեր բարդ ժամանակներում անհրաժեշտ է ամուր պահել հավատքը, ազգանվիրումն ու եկեղեցանվիրումը: Ով, եթե ոչ մենք՝ հոգևորականներս, և մեր հավատավոր զավակները, որ միասնաբար կազմում ենք Սուրբ Եկեղեցին, պիտի ջանքեր ներդնենք, որպեսզի մեր կյանքում, հայրենական անդաստանում հաղթանակեն սերը, արդարությունը և ճշմարտությունը, կամայականությունների և ապօրինությունների հանդեպ գերակայեն օրենքն ու իրավունքը, և մեր ժողովուրդը ապրի անխռով ու միաբան»:

էջ 4

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունը բաշխեց «Քրիստոնյա ընտանիքը հայ ինքնության խարիսխ» համահայկական ուխտագնացության մասնակիցներին

↩ էջ 3

Իր խոսքում Նորին Սրբությունը նկատեց, որ երիտասարդների հոգևոր խնամատարությունը մեր Սուրբ Եկեղեցու կարևորագույն առաքելություններից է՝ նոր սերնդին առաջնորդելու ավետարանական պատվիրաններով, ամրապնդելու ազգային ոգին ու գիտակցությունը և հաստատուն պահելու բարեպաշտության ուղիներում:

«Մեր ժամանակներում երիտասարդությունը կանգնած է բազում հոգևոր-բարոյական մարտահրավերների, աշխարհայնացման ու աշխարհիկացման երևույթների առջև, երբ տարատեսակ գրավչություններ են հրամցվում երիտասարդներին՝ հաճախ միտումնավոր՝ հեռացնելու համար ազգային ավանդույթներից, նախնյաց ժառանգությունից ու նվիրական արժեքներից: Իբրև Եկեղեցու հովանու ներքո հասակ առած, ազգասիրությամբ սնված հայորդիներ՝ պաշտպանը եղեք մեր սրբությունների, գործուն մասնակցություն բերեք ձեր թեմական և համայնքային կյանքին, լծվեք ազգային ու եկեղեցական անդաստանի շինության ու առաջընթացի գործին»,– պատգամեց Հայոց Հայրապետը:

Հայ Եկեղեցու համաշխարհային երիտասարդական միության հիմնադրման 25-ամյակի առիթով Գարեգին Երկրորդ Հայրապետն իր գնահատանքը բերեց կառույցի հոգևոր առաջնորդ Գերաշնորհ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանին, որ միության հիմնադրման առաջին իսկ օրվանից մեծ ներդրում ունի ՀԵՀԵՄ-ի գործունեության արդյունավորման մեջ, ինչպես նաև՝ միության հոգևոր տեսուչ և կենտրոնական գրասենյակի տնօրեն Հոգեշնորհ Տ. Թովմա վարդապետ Խաչատրյանին, կառույցի բոլոր նվիրյալ աշխատակիցներին, թեմական առաջնորդներին ու հոգևոր հովիվներին՝ երիտասարդների հանդեպ դրսևորվող առանձնահատուկ հոգատարության համար:

Վերջում Նորին Սրբությունն աղոթքով հայցեց Աստծո օրհնությունը ամենքին՝ մաղթելով նորանոր ձեռքբերումներ Հայ Եկեղեցու համաշխարհային երիտասարդական միավորմանը՝ ի պայծառություն մեր Սուրբ Եկեղեցու և ի բարօրություն քրիստոսասեր մեր ժողովրդի:

Սուրբ և Անմահ Պատարագներ Մայր Տաճարում՝ գերիների ազատության, նեղյալների մխիթարության և հայրենի երկրի խաղաղության համար

Հուլիսի 1-ին Միածնաէջ Մայր Տաճարում հայրենի երկրի խաղաղության, գերյալների ազատության, նեղյալների մխիթարության համար Սուրբ և Անմահ Պատարագ մատուցեց Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գրիգոր եպիսկոպոս Խաչատրյանը:

Իր քարոզում Սրբազան Հայրը, հիշեցնելով սուրբգրային «Որտեղի՞ց ես գալիս և ո՞ւր ես գնում» (Ծննդ. 16:8) հարցադրումը, ընդգծեց, որ այն ուղղված է յուրաքանչյուրին և ողջ մարդկությանը: Գրիգոր Սրբազանն ընդգծեց, որ այդ հարցի պատասխանը գտնելու համար պետք է քայլել դեպի Հիսուս Քրիստոս, որպեսզի ճանաչելով աստվածային ճշմարտությունը՝ զղջումով ու ապաշխարությամբ վերագտնեք մեր իրական կոչումն ու առաքելությունը:

Պատարագիչ Սրբազանը նկատեց, որ հնչեցված հարցն արդիական է նաև այսօր՝ մանավանդ մեր երկրի համար այս փոթորկալի օրերին:

«Յուրաքանչյուր հայ, եթե ծանոթ է իր երկրի ու Եկեղեցու պատմությանը, վստահ կարող է ասել, թե որտեղի՞ց է գալիս և ո՞ւր է գնում: Իսկ այն անձը, որն ընդամենն այդ պատմությունից պատառիկներ գիտի, ապագա չունի, որովհետև անցյալն իմանալով է, որ պիտի կառուցես ապագան, անցյալների սխալները տեսնելով է, որ պիտի փոխես ներկան և ապագայում սխալներ չգործես: Իսկ ո՞ւր ենք գնում մենք այսօր: Ազգովի կարծես այն իրավիճակի մեջ ենք, որ չգիտենք՝ որտեղի՞ց եկանք, ինչպե՞ս հայտնվեցինք այս օրհնաբեր հողի վրա և ո՞ւր ենք գնում»,– ասաց Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդը՝ հորդորելով ներկաներին առաջնորդվել ազգային ինքնության գիտակցությամբ լուսավորված ճանապարհով:

Այնուհետև Սուրբ Պատարագի «Տէր, ողորմեա» երգեցողության ժամանակ հոգևորականներն ու ներկա հավատացյալները մասնավոր աղոթք բարձրացրին ապօրինաբար ազատազրկված Միքայել և Բագրատ արքեպիսկոպոսների, ազգային բարերար տիար Սամվել Կարապետյանի, բոլոր նեղյալների ու գերյալների ազատության, ինչպես նաև հայրենի երկրի խաղաղ և բարօր կյանքի համար:

Հուլիսի 2-ին Միածնաէջ Մայր Տաճարում հայրենի երկրի խաղաղության, գերյալների ազատության, նեղյալների մխիթարության համար Սուրբ և Անմահ Պատարագ մատուցեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վարչատնտեսական բաժնի տնօրեն Գերաշնորհ Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանը:

Իր քարոզում Սրբազան Հայրն ընդգծեց, որ Քրիստոսի և առաքյալների գործունեությունն ընթացել է զրկանքներով՝ հիշեցնելով Տիրոջ խոսքը. «Եթե Ինձ հալածեցին, ձեզ էլ կհալածեն» (Հովհ. 15:20)՝ որպես զգուշացում բոլոր դարերում հավատացյալներին սպասվող դժվարությունների մասին:

«Մեր ժամանակներն էլ հիշեցնում են Տիրոջ երկրային կյանքի տարիները և առաքյալների գործունեության ժամանակները, քանի որ այսօր էլ Եկեղեցու հանդեպ ծավալվում են տարատեսակ դատապարտելի արշավներ, Փրկչի կենարար վարդապետության դեմ դրվում են կեղծ գաղափարախոսություններ: Ինչպես երբեմն հավիտենական և խաղաղության Թագավորի փոխարեն հրեից թագավոր էին փնտրում, մարդկանց հոգիների Փրկչի փոխարեն հռոմեացիների լծից ապստամբ ազատարար էին փնտրում, այնպես էլ այսօր արդարությունը բարձրաձայնողների մեջ մեղավորներ, իսկ արժանապատիվ խաղաղության քարոզիչների մեջ ըմբոստներ են փնտրում»,– նշեց Սրբազան Հայրը՝ հավելելով, որ հայրենիքի խաղաղության, ժողովրդի բարօրության համար մշտապես աղոթող եկեղեցականն է այսօր թիրախավորվում:

«Իրենց կյանքն Աստծուն, Եկեղեցուն և հայրենիքին նվիրած մեր հոգևոր եղբայրներ Միքայել և Բագրատ արքեպիսկոպոսները և ի պաշտպանություն Եկեղեցու կանգնած ու մշտապես հավատքը գործով ապրեցրած ազգային բարերար Սամվել Կարապետյանն այսօր ապօրինաբար ազատազրկված են և գտնվում են մեկուսարաններում»,– ասաց պատարագիչ Սրբազանը՝ հրավիրելով հավատավոր հայորդիներին աղոթք բարձրացնել առ Աստված, որպեսզի փարատվի նրանց միայնությունը:

Վերջում Մուշեղ եպիսկոպոսը պատգամեց հավատացյալներին հավատարիմ մնալ հոգևոր ու ազգային արժեքներին, սիրել և պայքարել հանուն ճշմարտության ու չերկնչել հալածանքներից:

Հուլիսի 3-ին Միածնաէջ Մայր Տաճարում Սուրբ և Անմահ Պատարագ մատուցեց Բրազիլիայի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Նարեկ եպիսկոպոս Բերբերյանը:

Իր քարոզում պատարագիչ Սրբազանն անդրադարձավ հայոց աշխարհում աստվածային լույսի ներգործուն զորությանը, որը ճառագեց Խոր Վիրապի խավար գուբից, որտեղ Սուրբ Գրիգոր Լուսավորիչը՝ ընկերակցությամբ լռության, ցրտի, մենության, հաստատուն մնաց իր հավատքի մեջ և Սուրբ Հոգու շնորհներով, լուսավոր հավատքով վերակառուցեց մեր հոգևոր հայրենիքը:

Նարեկ Սրբազանն ընդգծեց, որ այդ հոգևոր հայրենիքում հաստատվեց Սուրբ Էջմիածինը՝ որպես աստվածային հայտնության մարմնացում, ուր Աստված հանդիպեց հայոց ազգին:

Սրբազան Հայրը խոսեց նաև մերօրյա դժվարությունների և Եկեղեցու դեմ իրականացվող արշավի մասին՝ անդրադառնալով անազատության մեջ գտնվող հայորդիներին. «Այն, ինչ որ տեսանք օրեր առաջ, իսկապես, կարելի է անվանել համազգային ամոթի օր: Մեր երկու հոգևոր եղբայրները՝ Միքայել և Բագրատ Սրբազանները, ինչպես նաև ազգային բարերար տիար Սամվել Կարապետյանն այսօր «Վիրապ»-ի մեջ են: Նրանք լուռ են, բայց նրանց աղոթքը բարձրանում է երկինք, ու այդ աղոթքի ձայնը տարածվում է Սուրբ Էջմիածնից:

....Սուրբ Էջմիածինն ամուր է իր հոգևորականաց դասով՝ ի գլուխ ունենալով Ամենայն Հայոց Հայրապետին: Այն սասանել անկարելի է, որովհետև նրա հիմքը մեր Տերն է՝ Հիսուս Քրիստոս»,– նշեց Նարեկ Սրբազանը՝ ամենքին հորդորելով այս տագնապալի օրերին հաստատուն լինել հավատքի մեջ, մնալ հավատարիմ զավակները Սուրբ Էջմիածնի և աղոթք բարձրացնել հայրենի երկրի խաղաղության, գերյալների ազատության և նեղյալների մխիթարության համար:

Հուլիսի 4-ին Միածնաէջ Մայր Տաճարում Սուրբ և Անմահ Պատարագ մատուցեց Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Արմաշ եպիսկոպոս Նալբանդյանը:

Իր քարոզում Սրբազան Հայրը խոսեց քրիստոնյայի հոգևոր պայքարի, անձի ազատ ընտրության և պատասխանատվության կարևորության մասին՝ ընդգծելով, որ մենք կամ ծառայում ենք Աստծուն՝ սիրով, խոնարհութեամբ ու հնազանդութեամբ, կամ դառնում ենք մեղքի, եսասիրութեան, ստի ու կեղծ գաղափարների ծառաներ: Այս առնչությամբ Արմաշ եպիսկոպոսը շեշտեց, որ քրիստոնեությունն առաջնորդում է ամենքին Աստծո կամքին հնազանդությամբ, նվիրումով և զոհաբերության ոգով հասնելու իրական ազատության ու պատասխանատվությամբ հանձն առնելու և հաղթահարելու բոլոր գայթակղություններն ու փորձությունները:

Անդրադառնալով մերօրյա իրականությանը՝ Սրբազան Հայրն ընդգծեց, որ այսօր էլ կոչված ենք մեր առաքելությանը հավատարիմ, հոգևոր-ազգային արժեքների պահպանությամբ հաստատել արդարության և ճշմարտութեան գերակայությունը ազգային ու հասարակական կյանքում:

«Այս պահին մեր սիրելի եղբայրներ Միքայել և Բագրատ արքեպիսկոպոսներն ու ազգային բարերար տիար Սամվել Կարապետյանն ապօրինաբար ազատազրկված են:

...Չենք կարող լուռ նայել այս ոտնձգություններին, երբ փորձում են խաթարել մեր հոգևոր պատկանելությունը, երբ հավատքը զրկվում է հանրային իրավունքից՝ փակելով ժողովրդի հոգևոր շնչառությունը»,– ասաց Արմաշ Սրբազանը՝ հրավիրելով հավատավոր ժողովրդին աղոթք բարձրացնելու Սուրբ Էջմիածնի պայծառության, մեր հայրենիքի խաղաղության, ինչպես նաև գերյալների ազատության և նեղյալների մխիթարության համար:

Սուրբ Պատարագ Միածնաէջ Մայր Տաճարում

Հուլիսի 6-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ Միածնաէջ Մայր Տաճարում մատուցվեց Սուրբ և Անմահ Պատարագ:

Պատարագիչն էր ԱՄՆ հայոց արևմտյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը:

Սրբազան արարողությանը ներկա էին Հայաստանից ու Սփյուռքից թեմական առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ, Հայ Եկեղեցու համաշխարհային երիտասարդական միավորման (ՀԵՀԵՄ) կողմից կազմակերպված համահայկական ուխտագնացության եկեղեցասեր երիտասարդներ և բազում հավատացյալ հայորդիներ:

Իր քարոզում Սրբազան Հայրն անդրադարձավ խոնարհության առաքինությանը՝ որպես հոգևոր կյանքի առանցք՝ ընդգծելով, որ խոնարհության կենդանի և կատարյալ օրինակը մեր Տեր Հիսուս Քրիստոսն է, Որն ուղեկից է ամենքին հոգևոր կյանքի ընթացքում. «Սիրելի՛ հայորդիներ, Տերը հրավիրում է ամենքիս պայծառակերպության: Խնդրենք Աստծուն, որ բացի մեր հոգու աչքերը՝ տեսնելու ճշմարիտը, տեսնելու այն, ինչ սուրբ է և վստահված է ամենքիս Տիրոջ կողմից»,— ասաց Հովնան արքեպիսկոպոսը՝ հորդորելով հավատացյալներին անհատական և հավաքական կյանքում ամրագրել աղոթքի մղումը, համերաշխության, եղբայրության ոգին ու գիտակցությունը:

Ապա իր խոսքն ուղղելով համահայկական ուխտագնացությանը մասնակից եկեղեցասեր երիտասարդներին՝ Հովնան Սրբազանը կարևորեց Հայաստանի և Սփյուռքի հայորդիների համախմբումը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում. «Սուրբ Էջմիածինը ներշնչում է մեզ խոնարհվել մեր սրբազան ավանդույթների առջև, Սուրբ Էջմիածինը մեր առջև բացում է լուսավորյալ կյանքի ճանապարհը՝ նոր թռիչք տալով ձեր ծաղկյալ հոգիներին և իղձերին, որպեսզի ինչպես այսօր, հավիտյան միավորի աշխարհասփյուռ հայությանը՝ դառնալով ոգեշնչման աղբյուր մեր զավակների և գալիք սերունդների համար»,— նշեց Հովնան Սրբազանը՝ պատգամելով ամենքին ծառայության բարձր գիտակցությամբ կամուրջ լինել Հայրենիքի ու Սփյուռքի միջև:

Համահայկական ուխտագնացության մասնակիցների անունից Սրբազան Հայրն իր որդիական սերն ու երախտագիտությունը հայտնեց Ամենայն Հայոց Հայրապետին՝ ՀԵՀԵՄ-ի հիմնադրման, հայրական օրհնության ու հոգածության համար:

Վերջում Հովնան Սրբազանը պատգամեց հավատավոր ժողովրդին և երիտասարդներին՝ հայրենիքով ներշնչված, Սուրբ Էջմիածնով զորացած՝ ամուր փարվել մեր սրբություններին, միմյանց նկատմամբ անվերապահ սիրով հաղթահարել փորձությունները և առաջնորդվել դեպի կենարար լույս:

Նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կատարվել են նորաօծ եկեղեցականների նշանակումներ:

Հոգեշնորհ Տ. Սեպուհ աբեղա Ասատրյանը նշանակվել է Մայր Աթոռի տեղեկատվական համակարգում՝ որպես գործավար-քարտուղար:

Հոգեշնորհ Տ. Մխիթար աբեղա Եփրեմյանը, ազատվելով Մայրավանքի տեսչությունում ստանձնած պարտականություններից, ծառայության է կոչվել Գևորգյան հոգևոր ճեմարանում՝ որպես ավագ վերակացու:

Հոգեշնորհ Տ. Հովսեփ աբեղա Հակոբյանը նշանակվել է «Թրբանճյան» ընծայարանում՝ որպես փոխտեսուչ ուսումնադաստիարակչական գծով՝ ազատվելով վերակացուի պարտականություններից:

Հոգեշնորհ Տ. Վազգեն աբեղա Կարապետյանը ծառայության է կոչվել «Գարեգին Ա» կրթական կենտրոնում՝ որպես գործավար-քարտուղար:

Արժանապատիվ Տ. Առեն քահանա Մարտիրոսյանը, ազատվելով ՀՀ ԶՈՒ հոգևոր առաջնորդությունում ստանձնած պարտականություններից, նշանակվել է Իրաքի հայոց թեմում:

Արժանապատիվ Տ. Եղիա քահանա Փահլևանյանը ծառայության է կոչվել Տավուշի թեմում:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

ՔՐԻՍՏՈՆՅԱ ԲԱՐԵԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Կայենի սերունդը

Ծննդոց 4-րդ գլխում՝ Աբելի և Կայենի հակամարտության դրվագից հետո, ներկայացվում է Կայենի սերնդաբանությունը կամ բովանդակային բնորոշմամբ՝ քաղաքակրթության ակունքներում կանգնած անձանց պատմությունը: Հայրենի երկրից զրկված Կայենը դառնում է անօթևան, թափառական՝ բնակություն հաստատելով Եդեմից արևելք՝ Նայիդ երկրում, որը դառնում է քոչվոր դարձած Կայենի սերնդի՝ կայենականների նոր բնակավայրը: Նայիդ կամ Նոդ անունը, ըստ որոշ մեկնիչների, ոչ թե որոշակի տարածքի հատուկ անվանում է, այլ Կայենի և նրա հետնորդների քոչակայանին՝ իբրև աքսորի և աղետի երկրի տրված պարզ մի անուն (נוד, նայիդ — թափառող): Ադամի սերունդների ցանկը համեմատելի է նախաջրհեղեղյան յոթ հերոսի վերաբերյալ հինմիջագետքյան ավանդության հետ, որը պատում է արվեստի ու մշակույթի սկզբնավորման մասին:

Կայենը նոր կեցավայրում մերձենում է իր կնոջը: Հարցն անխուսափելի է. ո՞վ էր Կայենի կինը: Հետևելով սուրբգրային պատմության էջերում առկա մանրամասներին՝ կարող ենք փաստել, որ նախընթաց համարներում չի հիշատակվում Կայենի կինը: Այս դեպքում նախամարդու առաջին որդին ակնհայտորեն պետք է ամուսնացած լիներ իր քույրերից մեկի հետ, իսկ կանանց անունները սովորաբար տեղ չեն գտել եբրայական սերնդաբանական ցանկերում: Սուրբ Հովհան Ոսկեբերանը, անդրադառնալով այս տեղիին, պարզաբանում է, որ սկզբում, երբ մարդկային ցեղին անհրաժեշտ էր բազմանալ, քույրերի հետ ամուսնությունը թույլատրելի էր: Այստեղից ենթադրելի է նաև, որ Կայենը պետք է ամուսնացած լիներ նախքան Աբելին սպանելը, քանի որ կասկածելի է, որ որևէ կին խիզախեր ամուսնանալու եղբայրասպան մեղսավորի հետ: Ուշ շրջանի ռաբբունական ավանդությունը պատմում է, որ Կայենի կինը նրա հետ միաժամանակ ծնված քույրն է եղել, որի անունը կամ Ազուրա էր, կամ Սավա:

Այսպես, ծնվում է Ենոքը՝ նախաստեղծ անկյալ մարդկության առանձին մի ճյուղի անդրանիկը, որից էլ սկիզբ են առնում մյուս կայենականները: Այս հատվածում սուրբգրային հեղինակը ներկայացնում է գլխավոր անձանց անունները՝ ըստ ծննդաբանական ցանկերի կարգի՝ տեղ-տեղ բացատրական փոքր նշումներ ավելացնելով: Այդ նշումները շատ կարևոր ու բացառիկ տեղեկություններ են պարունակում անվանակիր անձնաց կյանքի հանգամանքների, նահապետական գերդաստանում ունեցած կարգավիճակի մասին:

«Կայենը պառկեց իր կնոջ հետ. նա հղիացավ և ծնեց Ենոքին: Կայենը մի քաղաք կառուցեց և այդ քաղաքը կոչեց Ենոք՝ իր որդու անունով» (Ծնն. 4:17): Կայենի առաջին որդու՝ Ենոքի անունը նշանակում է «սրբագործող, ձեռնարկող, վերանորոգող»: Այս անունը կարող էր դրվել՝ հաշվի առնելով Ենոքի անդրանիկ լինելը, ինչպես տեսնում ենք սուրբգրային պատմության հետագա զարգացումներում: Իսրայելի անդրանիկ որդի Ռուբենի առաջնեկի անունը ևս Ենոք էր (Ելք 6:14), որից էլ առաջ եկավ Ենոքյանների տոհմը (Թվ. 26:5): Ենոք անունը կարող էր տրվել նաև՝ ի հիշատակ թափառական, քոչվոր կենցաղից քաղաքային նստակյաց կենսակերպի անցման նախաձեռնության: Կյանքի է կոչվում Կայենի երազանքը. ավելի ամուր, հաստատուն հիմքերի վրա է խարսխվում երկրային կյանքը, սկսվում է նյութական իրականության մեջ երջանկության որոնման և կորուսյալ ժամանակները նորովի սկզբնավորելու՝ ցօրս ձգվող կենսընթացը: Այս Ենոքին չպետք է շփոթել Հարեդի որդի Ենոքի հետ, որին վերագրվում է պարականոն Ենոքի գրքի հեղինակությունը:

Միևնույն ժամանակ Կայենը քաղաք է կառուցում. եբրայերեն այսպես է հիշատակված. «և նա քաղաք կառուցող էր», այսինքն՝ դրեց հիմքերը, կատարեց հիմնարկեքը, հանձնարարեց քաղաքի բուն կառուցումը հենց Ենոքին և հաջորդ սերունդներին: Այդ քաղաքը պետք է որ լիներ ամրացված մի վայր՝ հավանաբար խրամատներով գոտևորված և ցցերով պարսպապատված՝ շրջական վայրի կենդանիներից պաշտպանելու համար: Նյութական մշակույթի տեսանկյունից առաջնադիր քաղաքի կառուցումը չափազանց հրադարձային և տպավորիչ իրողություն էր, քանի որ այն նշանավորում էր անցումը քոչվորական կյանքից նստակեցության և նույնիսկ վկայում էր վերջինիս ակնհայտ առաջընթացի մասին:

Ենոքի անունով քաղաքը աստվածաշնչյան պատմության մեջ ուրբանիզացիայի ամենավաղ դեպքի մասին հիշատակությունն է: Այս զարգացումը նշանակալի է Ծննդոց գրքի վաղ գլուխների համատեքստում, որտեղ նկարագրվում են մարդկության տարածումը և հասարակական տարբեր կառույցների ստեղծումը: Ենոքի անվամբ քաղաքը խորհրդանշում է մարդկային հնարամտությունը և կազմակերպված համայնքներ ստեղծելու մարդկային կարողությունը՝ նույնիսկ նրանց մեջ, ովքեր մեղսընթաց Կայենի սերնդից են:

Աստվածաբանական տեսանկյունից՝ Ենոքի պատմությունը հիշեցնում է Աստծո նախախնամության և մարդկության պատմության համաքայլության մասին: Չնայած Կայենի մեղքին և դրան հաջորդած պատժին՝ նրա տոհմը շարունակվում է, որի հետ մեկտեղ աստվածաշնչյան պատմությունն շարունակում են ներթափանցել շնորհի և դատաստանի թեմաները: Ենոքի դիրքը Կայենի տոհմում ծառայում է որպես Աստծո ստեղծագործության մնայուն բնույթի և ողջ մարդկության միջոցով Նրա աստվածային ծրագրի հայտնության վկայություն:

Ենոքի ժառանգությունը հիմնականում կապված է նրա անունը կրող քաղաքի հետ՝ արտացոլելով քաղաքակրթություն կառուցելու և հաստատելու վաղ մարդկային ջանքերը: Թեև Աստվածաշունչը խորաքնին մանրամասներ չի տալիս Ենոքի կյանքի կամ բնավորության մասին, նրա հիշատակումը ծագումնաբանության մեջ ընդգծում է մարդկության պատմության շարունակականությունը և Ադամի ու Եվայի սերունդների անցած տարբեր ուղիները:

Քրիստոնեական պահպանողական մտածողության մեջ Ենոքի պատմությունը հաճախ դիտարկվում է անկման և փրկագնման պատմության ավելի լայն համատեքստում: Այն ծառայում է որպես մեղքի հետևանքների հիշեցում, ինչպես երևում է Կայենի արարքներից, և աշխարհի փրկագնման ու վերականգնման հույսի մասին Աստծո շարունակական աշխատանքի հաղորդում: Ենոքը՝ որպես Կայենի շառավիղ, ներկայացնում է մարդկային էության բարդությունը և կյանքի փորձառության մեջ թե՛ մեղքի, թե՛ ստեղծագործելու ներուժը:

Ենոքին հաջորդում է որդին՝ Գայերիդադը կամ Հերադը: Հերադ նշանակում է «քաղաք» և դրանով իսկ մատնանշում է նրան՝ առավելաբար որպես քաղաքի բնակչի, որպես առաջին իրական քաղաքացու: Կայենի կողմից զարկ տրված քաղաքի կառուցումը շարունակվում է Ենոքով՝ ըստ երևույթին ավարտվելով վերջինիս որդու ծննդյան ժամանակ, և հիշարժան այս իրադարձությունը հավերժացնելու առիթով էլ Ենոքը որդուն անվանում է Հերադ:

Գայերիդադին (Հերադին) հաջորդում է Մայիելը, որի անունը նշանակում է «Աստծուց ոչնչացված, պարտված»: Դժվար է հստակ բացատրել այս անվան կնքման նախապատմությունը: Հավանական է, որ Մայիելի օրոք եղել է տարերային մի աղետ՝ Աստծուց եկած պատուհաս, որը հիշատակելու համար այդպես են անվանակոչել Կայենի զարմից այս մարդուն: Անվան ստուգաբանությունն արտացոլում է նաև մարդկության և Աստծո բարդ հարաբերությունները, որը կրկնվող թեմա է Ծննդոց գրքի վաղ գլուխներում: Անունը կարող է հուշել աստվածային գերիշխանության և մարդկային գործողությունների հետևանքների ճանաչման մասին, հատկապես Կայենի հետնորդների շրջանակում:

Մայիելին հաջորդում է Մաթուսայելը, որի անունը նշանակում է «Աստծո այր, Աստծուց տրված՝ խնդրված»: Այստեղ նշմարելի են մեղսընթաց կայենականների՝ երկնային պատժի հետևանքով դարձի գալու և Աստծո առջև խոնարհվելու հետքերը:

Կայենի տոհմաբանության մեջ հիշյալ անձինք՝ ներառյալ Մաթուսայելը, ցույց են տալիս մարդկային մշակույթի և նորարարության տարածումը, ինչպես նաև դրանց ուղեկցող բարոյական անկումը: Գործունեության այս ուղղությունը հաճախ հակադրվում է Սեթի հետնորդների ընթացքի հետ, որոնք ներկայացված են որպես Աստծուն ավելի հավատարիմ: Մաթուսայելի և նրա ընտանիքի հիշատակումն ընդգծում է մարդկային էության երկակիության աստվածաշնչյան թեման, որը կարող է մեծ նվաճումներից մինչև խոր, անդնդասույզ մեղքերի ծովածավալ տարածություն ընդգրկել:

Մաթուսայելն ապրել է մի դարաշրջանում, որը հայտնի է որպես անտիդլուվիյան (նախաջրհեղեղյան) ժամանակաշրջան. այն, ըստ Աստվածաշնչի, եղել է Մեծ ջրհեղեղից առաջ: Այս դարաշրջանը հայտնի է մարդկային կյանքի տևողությունն արձանագրող ծագումնաբանական պատմություններով, որոնք հաշվվում են հարյուրավոր տարիներով, ինչը կտրուկ տարբերվում է ժամանակակից մարդկային կյանքի տևողությունից: Մաթուսայելի հակիրճ հիշատակման ամենակարևոր հանգամանքը նրա կապն է իր որդու՝ Ղամեքի հետ: Ղամեքը Աստվածաշնչում կարևոր գործիչ է, որը հայտնի է որպես արձանագրված բազմակնության և Աստվածաշնչում բանաստեղծական ողբի հղացման առաջին հեղինակ:

Անունների նույնարմատության պատճառով հաճախ են շփոթում Կայենի սերնդի Մաթուսայելին Սեթի սերնդի Մաթուսաղայի հետ: Մաթուսաղան ապրել է նահապետներից ամենաերկարը՝ մահանալով 969 տարեկանում: ➥ էջ 7

Յակոբ Պատրիարք Նալեան. Մեղքերու մասին ընդհանրապէս

Սկիզբը՝ 2025 թ. թիւ 12 համարում

ԽՆԴԻՐ ԺԱ. Մահացու եօթներորդ մեղքի մասին, որ բղջախոհութիւնն է

Բղջախոհութիւնը անյագ հեշտութեան ցանկութիւնն է, որ յառաջ կու գայ պիղծ տռփանքի սեռական զուգաւորութենէն: Արդ, այս չար եւ անօրէն մեղքը զանազան կերպեր ունի: Նախ՝ ազատ [եղողը՝ այր թէ կին, ուրիշ] ազատի մը հետ. կամ ամուսնացած մը ուրիշ ամուսնացածի մը հետ. ասիկա պոռնկութիւն կը կոչուի:

Երկրորդ՝ ազգակից եւ խնամի, ինչպէս նաեւ երբ հոգևոր ազգականները կը խառնակուին. ասիկա ազգապղծութիւն կը կոչուի:

Երրորդ՝ շնութիւն կ'ըսուի, որ ամուսնացածին անկողինը օտարի մը մտնելովը կ'ապականի:

Չորրորդ՝ կոյս մը ապականել, որ կը կոչուի կուսապղծութիւն:

Հինգերորդ՝ երբ եկեղեցականին եւ կուսութիւն խոստացողին կ'ապականեն. ասիկա սրբապղծութիւն կը կոչուի:

Վեցերորդ՝ երբ ոեւէ մէկը անբարոյ կնոջ հետ պառկի, կը պղծուի եւ անբարոյ կը կոչուի:

Եօթներորդ՝ զուգակիցներուն վաւաշոտ սեռական յարաբերութիւնը, որ չափէն աւելի կը հետևին իրենց չար ցանկութեան, ժամ ու ժամանակ չգիտնալով, այլ անասունի նմանելով ու անոնցմէ աւելի վատ ըլլալով, քանի որ անոնք՝ անասունները, ժամանակ ունին. ասիկա փիս եւ պիղծ սովորութիւն կը կոչուի: Ասիկա զանազան կերպերով է, որովհետև կայ, որ արժանի կը կոչուի, ինչպէս այն որ որդեծնութեան համար կ'ըլլայ: Մէկու մը տկար կ'ըսուի, որով ամուսնացածները մէկը միւսին պարտքը կը հատուցեն: Մէկու մը սանձարձակական կ'ըսուի, որ վերիններուն պէս չէ, այլ պոռնկութենէ փախչելու համար կը կատարուի: Վարդապետները կ'ըսեն, թէ այս երեքին համար մեղք չըսուիր:

Սակայն չորս կերպ կայ, որ խոտելի է ամուսնական գործը [սեռական յարաբերութիւնը]: Նախ՝ երբ բոզական գիրկընդխառնումով եւ պիղծ համբոյրով կ'ըլլայ:

Բ. Երբ սովորութեան դէմ կ'ըլլայ, որ յիշուելիք չէ:

Գ. Երբ անվայել եւ անպատշաճ տեղ մը կ'ըլլայ, ինչպէս սուրբ տեղ մը կամ տեսնողներու մէջ:

Դ. Երբ յղի կնոջ մը հետ կ'ըլլայ, որուն ծննդաբերութեան օրերը մօտեցած են: Անասունները յղի մնալէն ետք մէկը միւսին չեն մօտենար, եւ շատ լաւ կ'ըլլար, եթէ բանականներն ալ այս ուղղութեամբ անասուններուն հետևէին:

Ութերորդ՝ արուն արուի հետ, որ սոդոմական արուագիտութիւն կը կոչուի, պիղծ եւ անյիշելի, Աստուծոյ համար ամէն բաներէն աւելի ատելի, բնութեան թշնամի, անասուններուն համար անգիտելի, մահուան եւ դժոխքի արժանի՝ կեանքի ընթացքին եւ յետ մահու, ծծումբով եւ երկինքէն տեղացող հուրով պատժելի, անխնայ, առանց ողորմութեան սպաննելի եւ չարը մեր մէջէն վերցնելու՝ ըստ աստուածադիր հրամանին:

Արդարև, բղջախոհութիւնը շատ դժուարութիւն կը բերէ եւ շատ վատ է: Նախ՝ որովհետև կ'ապականէ ու կը պղծէ Աստուծոյ տաճարը:

Բ. Դրախտէն կը հանէ, ինչպէս Ադամին ու Եւային հանեց:

Գ. Չար զաւակներ կը ծնի, ինչպէս Մովաբն ու Ամոնը՝ Ղովտի աղջիկներէն:

Դ. Անէծքներու արժանի կ'ընէ, ինչպէս Ռուբէնին ըրաւ Յակոբ Նահապետի առաջնեկին:

Ե. Կը զրկէ Արքայութենէն, ինչպէս կ'ըսէ Պօղոս, թէ՝ շնացողները պիտի չժառանգեն Աստուծոյ Արքայութիւնը:

Զ. Մարդուն Աստուծոյ թշնամի կը դարձնէ, ինչպէս կ'ըսէ Յակոբոս առաքեալ, թէ՝ շնացողներ, չէ՞ք գիտեր, թէ այս աշխարհին հանդէպ սէրը թշնամութիւն է Աստուծոյ հետ:

Է. Մարդուն խղճմտանքը կը դառնացնէ: Սողոմոնը կ'ըսէ, պոռնիկ կնոջ շրթունքները մեղր կը կաթեցնեն, որ որոշ ժամանակ մը կը պարարէ ոսկորները, բայց ետքէն լեղիէն աւելի դառնագոյն կը գտնես զայն:

Ը. Աշխարհէն խաղաղութիւնը կը վերցնէ, որովհետև առանց կնոջ սուր ու պատերազմ չէ եղած. այդ պատճառով Աստուած Դաւիթ մարգարէին ըսաւ, թէ՝ քու տունէդ սուրը թող չպակսի:

Թ. Կը յափշտակէ միտքը, քանի որ գինին եւ կիները կ'ապստամբեցնեն իմաստուններուն:

Ժ. Կը հալեցնէ երկաթէ միտքը: Քեզի օրինակ ա՛ռ Աստուծոյ ընտիր ծառան՝ Դաւիթ մարգարէն, Սողոմոն Իմաստունն ու զօրաւոր Սամփսոնը:

Ի վերջոյ, չափահաս մարդոցմէ շատեր բղջախոհութեան պատճառով դժոխք կ'երթան. ինչ բանէ թող ազատէ մեզ Ամենակարող Աստուած, որովհետև ո՛չ ոք կրնայ ժուժկալ ըլլալ, եթէ Աստուած չտայ անոր:

Դժոխքին կրակը աւելի գովելի է,
քան բղջախոհի հոգին.
որովհետև մեղաւորին կ'այրէ,
իսկ երկրորդը՝ նոյնիսկ առաքինիին:

«Քրիստոնէական Ուսանելի», 1806

Աշխարհաբարի վերածեց Վարանդ (Յակոբ) ՔՈՐԹՄՈՍԵԱՆԸ

Սարկավագի հանդերձանքն ու հարակից ծիսական պարագաները

Սարկավագությունը (ըստ Հրաչյա Աճառյանի՝ «սարկավագ» նշանակում է սպասավոր, ծառա) Ընդհանրական Եկեղեցու նվիրապետական կարևոր աստիճաններից է: Հայ Եկեղեցու նվիրապետական կարգի մեջ այն 6-րդն է: Սարկավագների ծառայության ու կոչման վերաբերյալ հիշատակումների հանդիպում ենք Նոր Կտակարանում: Առաջին սարկավագը Ստեփանոսն է. նա անդրանիկն էր, որ հանուն Հիսուս Քրիստոսի նահատակվեց և արժանացավ երանական անթառամ պսակին:

Նոր Կտակարանի «Գործք առաքելոց» գրքի մեջ հետևյալ կերպ են ներկայացված յոթ սարկավագի ընտրվելը, ձեռնադրությունն ու ծառայության կոչվելը. «Այն օրերին, երբ աշակերտները բազմացան, հունախոս հրեաները տրտնջացին եբրայախոս հրեաների դեմ, որովհետև իրենց այրիները ամենօրյա նպաստի բաշխման ժամանակ անտեսվում էին: Այդ ժամանակ տասներկու առաքյալները հավաքեցին աշակերտների բազմությունն ու ասացին. «Մեզ հաճելի չէ սեղանների սպասարկության պատճառով թողնել Աստծու խոսքի քարոզությունը: Եղբայրներ, ընտրե՛ք ձեր միջից բարի համբավ ունեցող, Սուրբ Հոգով և իմաստությամբ լի յոթ մարդու, որոնց կնշանակենք այդ ծառայությունների համար. իսկ մենք աղոթքի և խոսքի քարոզությանը նվիրվենք»: Այս խոսքը հաճելի թվաց բոլոր հավատացյալներին, և ընտրեցին Ստեփանոսին, որ հավատով և Սուրբ Հոգով լցված մի մարդ էր, և Փիլիպպոսին, Պրոքորոսին, Նիկանորասին, Տիմոնին, Պարմենասին, Նիկողայոսին, որ անտիոքցի մի նորադարձ էր: Նրանց կանգնեցրին առաքյալների առաջ և աղոթք անելով՝ նրանց վրա ձեռք դրեցին: Եվ Աստծու խոսքն աճում էր, ու աշակերտների թիվը Երուսաղեմում՝ չափազանց մեծանում: Նույնիսկ քահանաներից շատերը հնազանդվում էին հավատին» (Գործք 6.1–7):

Սուրբ Ստեփանոս Նախասարկավագի նահատակության դրվագը նույնպես արձանագրված է Նոր Կտակարանում: «Գործք առաքելոց»-ում նշվում է, թե երանելի սուրբը շնորհներով և զորությամբ լցված մարդ էր, որը զարմանալի գործեր էր կատարում և մեծամեծ նշաններ անում (Գործք 7.8): Սուրբ Ստեփանոսը նահատակվել է քարկոծմամբ: Նախասարկավագի վարքը և նահատակությունը նախօրինակ դարձան քրիստոնյաների համար: Այն օրինակ է ծառայում նաև սարկավագաց դասի բոլոր հոգևորականների համար:

Սարկավագների ծառայության և առաքինի կյանք վարելու վերաբերյալ ուրիշ հիշատակություններ ևս Նոր Կտակարանում կան, օրինակ՝ Պողոս առաքյալը Տիմոթեոսին ուղղված առաջին նամակում հետևյալն է գրում. «Նույնպես և սարկավագները պետք է պարկեշտ լինեն, ոչ թե երկդիմի խոսող, գինեսեր, շահամոլ, այլ պետք է մաքուր խղճով պահեն հավատի խորհուրդը: Նրանք էլ պետք է նախ փորձվեն և ապա, եթե անթերի լինեն, անցնեն ծառայության: Նրանց կանայք ևս պետք է պարկեշտ լինեն, ոչ չարախոս, հեզ, հավատարիմ ամեն ինչում: Սարկավագները պետք է լինեն մեկ կնոջ ամուսին, լավ վերակացու թե՛ իրենց որդիների և թե՛ իրենց տների համար, որովհետև այն սարկավագները, որոնք լավ են ծառայում, իրենց համար ձեռք են բերում պատվավոր աստիճան և մեծ համարձակություն հավատի մեջ, որ Քրիստոս Հիսուսով է» (Ա Տիմ. 3.8–13):

Սարկավագական ձեռնադրություն կատարվում է Պատարագի ընթացքում բեմում՝ Սուրբ Սեղանի առջև: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ամեն տարի Սուրբ Ստեփանոսի տոնին կատարվում է սարկավագական ձեռնադրություն: Ըստ ձեռնադրության Մաշտոց ծիսարանի՝ այն տեղի է ունենում հոգեթով աղոթքներով, աստվածաշնչյան տեղիների ընթերցումներով, սաղմոսներով և շարականների երգակցությամբ: Ստորև կներկայացնենք հոգեբուխ աղոթքներից որոշ հատվածներ, որոնք ընթերցում է ձեռնադրող եպիսկոպոսը. «Ամենակալ և ամենախնամ Տեր Աստված, որ ընտրեցիր քո այս ծառային (այստեղ ընթերցվում են ձեռնադրյալի կամ ձեռնադրյալների անունները, ըստ այդմ՝ աղոթքներն ընթերցվում են եզակի կամ հոգնակի) քեզ ծառայելու համար, սրբի՛ր սրան և արժանի՛ դարձրու, որ ամենայն իմաստությամբ և հոգևոր հանճարով Քո աստվածային ընթերցումներն ու խոսքերը սովորի և մտապահի, անբիծ կրոնավորությամբ պահի քո պատվիրանները, առաքինասեր վարքով մնա այս աշխարհում և Քո սրբերի հետ ձեռք բերի երկնային պարգևներ: Զորացրո՛ւ սրան քո ճշմարիտ վկայի՝ Սուրբ Ստեփանոսի նման՝ պահելով սատանայի բոլոր տեսակի փորձություններից, որպեսզի արժանի լինի սուրբ սրտով պահելու սարկավագության աստիճանը՝ ըստ Քո բարի կամքի, և Քո բոլոր սրբերի հետ հույսով սպասի հավիտենական կյանքին....» (Մաշտոց ծիսարան):

Ձեռնադրության մեջ կա մի դրվագ, որտեղ ձեռնադրող եպիսկոպոսն ասում է հետևյալը.

➥ էջ 8

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՍՈԿՐԱՏԵՍ

Առակ երեք մաղի մասին, որոնց միջոցով հարկ է զտել ամենայն լված բան և ճիշտ հարաբերություններ հաստատել մարդկանց հետ

Մի անգամ հին հույն փիլիսոփա Սոկրատեսին վազեվազ մի մարդ է մոտենում և շատ հուզված փորձում նրան ինչ-որ բան ասել.

— Ես քեզ ուզում եմ պատմել, թե ինչ է ընկերներիցդ մեկը քո մասին ինձ հայտնել:

— Սպասի՛ր, սպասի՛ր,— նրան անմիջապես ընդհատում է իմաստուն այրը:— Նախ՝ պատասխանի՛ր իմ այն հարցի՝ արդյոք այն, ինչ կամենում ես ինձ պատմել, ա՞նց ես կացրել երեք մաղի միջով:

— Ի՞նչ երեք մաղ,— զարմացած վրա է բերում այդ տղամարդը:

— Թո՛ւյլ տուր բացատրել քեզ. նախ՝ փորձի՛ր պատմելիքդ անց կացնել երեք մաղի միջով: Եթե մաղվի, այդժամ միայն կպատմես: Առաջին մաղը ճշմարտության մաղն է: Հավաստի՞ է արդյոք այն, ինչ կամենում ես ինձ պատմել:

— Չգիտեմ,— դողդոջուն ձայնով պատասխանում է այցելուն:— Այդ մասին որպես լուր գիտեմ ուրիշներից:

— Ուրեմն դու պետք է որ պատմելիքդ երկրորդ մաղով մաղած լինեիր,— շարունակում է Սոկրատեսը:— Իսկ դա բարության մաղն է: Իրապես այն, ինչ ուզում ես ինձ պատմել, բարի մի բա՞ն է:

— Ո՛չ, չեմ կարծում,— ազնվորեն խոստովանում է զրուցակիցը:— Բայց....

Իմաստուն այրը ևս մեկ անգամ ընդմիջում է նրան.

— Այդ դեպքում երրորդ մաղի օրինակն էլ բերենք և հարցը այսպես դնենք՝ արդյոք դա օգտակա՞ր է և այնքան անհրաժե՞շտ, որ ինձ հաղորդես, ինչի համար որ եկել ես:

— Դրա անհրաժեշտությունը չկա...

— Հետևաբար,— ժպտում է Սոկրատեսը,— եթե այդտեղ ճշմարտություն, բարություն և օգուտ չկան, ապա մի կողմ թողնենք: Մի՛ խոսիր և այդու մի՛ ծանրաբեռնիր ո՛չ ինձ, ո՛չ քեզ:

Առակ իմաստության անոթի մասին

Սոկրատեսի մոտ մի պատանի եկավ և հարցրեց.

— Ուսուցի՛չ, այդ ինչի՞ց է, որ որոշ մարդիկ իմաստուն են թվում, իսկ ուրիշները՝ ոչ: Ի՞նչն է մարդուն իրապես իմաստուն դարձնում:

Սոկրատեսը պատանուն հրավիրեց իր համեստ սենյակը և մի մեծ կավե անոթ դրեց նրա առաջ: Կուժը բերնեբերան լցրեց քարերով և հարցրեց.

— Արդյոք այս անոթը, ըստ քեզ, լեփ-լեցո՞ւն է:

— Այո՛, ուսուցի՛չ, լեփ-լեցուն է,— պատասխանեց պատանին:

Այդժամ Սոկրատեսը խճով լի մի պնակ վերցրեց և այն դատարկեց կժի մեջ: Խիճը լցրեց մեծ քարերի արանքները:

— Իսկ հիմա՞,— հարցրեց փիլիսոփան,— լեցո՞ւն է արդյոք անոթը:

— Այո՛, հիմա ավելի լեցուն է,— համաձայնեց պատանին:

Սոկրատեսը, մի բուռ ավազ վերցնելով, ավելացրեց անոթին: Ավազը լցրեց մնացյալ դատարկ արանքները:

— Իսկ հիմա այն լեցո՞ւն է,— փորձեց ճշգրտել Սոկրատեսը:

— Անտարակո՛ւյս,— հաստատեց պատանին:

Այդժամ փիլիսոփան անոթի մեջ ջուր լցրեց, որը ներծծվեց ավազի մեջ:

— Ահա այսպիսի՛ է իմաստությունը,— ասաց գիտուն այրը:— Խոշոր քարերը հիմնական գիտելիքներն ու կենսափորձն են, խիճը՝ մանր-մունր փաստերն ու դիտարկումները, ավազը՝ առտնին մանրուքները, իսկ ջուրը՝ այս ամենն ի մի բերող ունակությունը:

Առակ կույր ճամփորդների մասին

Մի անգամ Սոկրատեսը մի խումբ մարդկանց տեսավ, որոնք ճամփաբաժանին կանգնած՝ ոչ մի կերպ չէին կարողանում որոշել, թե ինչ ճանապարհ ընտրեն: Մոտենալով նրանց՝ հարցրեց.

— Ինչո՞ւ չեք կարողանում որոշել՝ ո՞ւր գնալ:

Ճամփորդներից մեկը պատասխանեց.

— Մենք բոլորս էլ կույր ենք և չգիտենք, թե ո՞ր ճանապարհը մեզ երջանկության կտանի:

Սոկրատեսը ժպտաց և ասաց.

— Բայց չէ՞ որ ձեր մեջ ճանապարհը տեսնող ուղեվար կա: Ինչո՞ւ չեք հետևում նրան: Ճամփորդները շփոթված պատասխանեցին.

— Մենք չգիտենք, թե ո՞վ է մեզնից ուղեվարը:

Այդժամ Սոկրատեսը բռնեց նրանցից մեկի թևը և տարավ առաջ: Որոշ ժամանակ անց նրանք հայտնվեցին ծաղիկներով ծածկված և թռչունների դայլայլով լեցուն մարգագետնում:

— Ահա տեսնո՞ւմ եք,— ասաց Սոկրատեսը,— երբ դուք վստահեցիք առաջնորդին, ճանապարհը տեսանելի դարձավ:

Թարգմանեց Գ. ԴԱՐԲԻՆՅԱՆԸ

Կայենի սերունդը

↩ էջ 5

Ըստ Ծննդոց գրքի՝ Մաթուսաղան Ղամեքի հայրն էր և Նոյի պապը: Աստվածաշնչում Մաթուսաղան հիշատակվում է նաև Ա Մնացորդաց գրքի և Ղուկասի Ավետարանի տոհմաբանություններում: Նրա կյանքն ավելի մանրամասն նկարագրված է այլ բնագրերում, ինչպիսիք են Ենոքի և Մովսեսի պարականոն գրքերը: Աստվածաշնչի մեկնաբանները տարբեր բացատրություններ են տվել, թե ինչու է Ծննդոց գրքում նկարագրվում, որ նա մահացել է այդքան մեծ տարիքում. ոմանք կարծում են, որ Մաթուսաղայի տարիքի հետ կապված թարգմանական սխալ է առկա, իսկ ըստ ոմանց դիտարկումների՝ նրա տարիքն օգտագործվում է տպավորություն ստեղծելու համար, որ Ծննդոց գրքում նկարագրվածի մի մասը տեղի է ունեցել շատ հեռավոր անցյալում: Մաթուսաղայի անունը դարձել է երկարակեցության հոմանիշ: Նա պատկերվել և հիշատակվել է կինոյում, հեռուստատեսությունում և երաժշտությունում:

Մաթուսայելի որդին Ղամեքն էր, որի ընտանեկան պատմությունը ներկայացվում է հաջորդող հատվածում: Ղամեք անունը լրացնող զույգ իմաստ ունի՝ «ամուր, ուժեղ», «ախոյան, կործանող»: Ղամեքը ներմուծեց բազմակնությունը՝ աղավաղելով ամուսնության աստվածահաստատ կարգը (Ծնն. 2:24) և ընկնելով սանձարձակ ցանկասիրության մեջ: Ղամեքը հայտնի էր ամբարտավանությամբ, բազմակնությամբ և բռնությամբ: Կայենի հետնորդների մասին հիշատակության մեջ Ղամեքը նպատակաուղղված կերպով առանձնացվել է՝ կարծես հուսահատությամբ և ապականությամբ Կայենի սերնդաբանական ցանկն ամբողջացնելու համար: Ինչ-որ իմաստով՝ Ղամեքը Կայենին ուղղված Աստծո նախազգուշացման մարմնացումն է. «Եթե բարին չանես, մեղքը դռանդ մոտ պառկած է, և նա քեզ է ցանկանում. բայց դու իշխիր նրա վրա» (Ծնն. 4:7): Ղամեքը մի մարդ էր, որը կառավարում էր մեղքը:

Մարդիկ ստեղծված են Աստծո պատկերով: Դա նշանակում է, որ մենք ունենք Աստծուց փոխանցվող որոշ հատկանիշներ: Այս ընդհանուր հատկանիշները հնարավոր են դարձնում Աստծո հետ հարաբերությունները: Ամուսնությունը սուրբ խորհուրդ է, որն ստեղծվել է Աստծո կողմից արարչագործության ժամանակ: Ծննդոց գրքի առաջին իսկ էջերում կարդում ենք, որ ամուսնության՝ Աստծո նախագիծը մեկ տղամարդ ու մեկ կին նախօրինակն է (Ծնն. 1:27–28, 2:23–24): Ինչ-որ չափով ամուսնությունն Աստծո եռամիասնության ընդօրինակումն է: Ճիշտ այնպես, ինչպես Աստված Մեկ է, Որ գոյություն ունի երեք հստակ, համահավասար Անձերի մեջ, այնպես էլ ամուսնությունն ուխտի հարաբերություն է, որը միավորում է երկու տարբեր անձանց (տղամարդ և կին), որոնք դառնում են մեկ մարմին (Ծնն. 2:24): Ի վերջո, ամուսնությունը Եկեղեցու հետ Քրիստոսի միության պատկերն է (Եփես. 5:22–33): Ամուսնությանն առնչվող՝ Աստծո սկզբնադիր ցանկացած փոփոխություն ապականում է այն:

Ղամեքի կատարածը մարդկության պատմության մեջ գրանցված բազմակնության առաջին օրինակն է: Թեև Սուրբ Գրքում որևէ բացահայտ հանդիմանություն չկա բազմակնության վերաբերյալ, սակայն այն երբեք չի ներկայացվում դրական լույսի ներքո, ավելին՝ Սուրբ Գիրքը միշտ ցույց է տալիս բազմակնության պատճառով առաջացած խնդիրները: Մինչև իսկ կան առանձին դեպքեր, որտեղ մոնոգամիան նախապայման է առաջնորդի դերի համար (Բ Օր. 17:17, Տիտ. 1:5–7):

Ղամեքի կանայք էին Ադան և Սելլան: Ադայի անունը նշանակում է «զարդարանք, գրավչություն», իսկ Սելլայինը՝ «ստվեր, քող»: Ինչպես անունների իմաստն է ցույց տալիս, երկու կանայք էլ մարմնական գեղեցկության խտացում են:

Ադայի առաջին որդին Հոբելն էր՝ վրանաբնակների և խաշնարածների հայրը: Նա է եղել հովվական-քոչվորական ապրելակերպի հիմնադիրը. նրա անվան մեջ հենց այս իմաստն էլ ծածկագրված է՝ «քոչվոր, հոտեր առաջնորդող»: Նա, փաստորեն, անասնապահության և գյուղատնտեսական տեխնիկայի առաջամարտիկն էր, բեդվինների կենսակերպի հիմնադիրը: Հոբելի եղբայրը Հոբալն էր, որը լարային և փողային գործիքների հայտնագործողն է, ինչպես ուղիղ կերպով նշվում է աստվածաշնչյան բնագրում (Հոբալը՝ որպես քնարահարների և սրնգահարների հայր): Հոբալ անվանումը նույնարմատ է «հոբելորան» բառին. նշանակում է փողային գործիքի մեղեդային ձայն:

Ղամեքը Սելլայից ունեցավ Թոբել-Կայենին (ըստ հունարեն Յոթանասնից թարգմանության՝ Թոբելա): Նրա անվան բացատրությունը չի տրվում Ծննդոց գրքում, սակայն ներկայացվում է նրա՝ որպես պղնձից ու երկաթից տեսակ-տեսակ գործիքներ պատրաստողի գործունեության բնույթը: Այդ գործիքները պահանջվում էին երկրագործության, անասնապահության, որսորդության, պատերազմի և երաժշտության համար: Այս համառոտ նշումն ընդգծում է պատմամշակութային այն կարևոր իրողությունը, որը նշանավորում է քարե դարից երկաթե դար անցումը: Հետաքրքրական և ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ Աստվածաշունչը նյութական մշակույթի պատմությանը համահունչ հայտնում է պղնձի մշակումից երկաթի վերամշակման անցման մասին:

Ըստ ռաբբի Ռաշիի՝ Թոբել-Կայենի անունը բառացիորեն նշանակում է «Կայենի համեմունքներ», իսկ եբրայերեն «թուբալ» (תובל) բառը, որը ծագում է «թուբլին» (יובל) բառից, նշանակում է «համեմունքներ»: Ռաշին նշում է, որ Թոբել-Կայենին այդպես են անվանել, քանի որ նա «համեմել և կատարելագործել է Կայենի գործը»: Այլ կերպ ասած՝ քանի որ նա դարբին էր, որ օգնում էր զենքեր պատրաստել՝ սպանությունն ավելի կատարելագործելու համար, նա վկայակոչում է իր նախահայր Կայենի սպանության մեղքը: «Հրեական հնախոսություններ»-ում Հովսեփոս Փլավիոսը գրում է, որ «Թոբել-Կայենը գերազանցում էր բոլոր մարդկանց ուժով և շատ հմուտ ու հայտնի էր մարտական ելույթներում.... և առաջին հերթին հորինեց արույր մշակելու արվեստը»:

Թոբելի քույրը Նոյեմին էր, որի անունը նշանակում է «սիրունատես, չքնաղ»: Ուսումնասիրողները կարծում են, որ նա ևս պետք է մի առանձին ուղղություն հաստատած լինի, և ելնելով անվան նշանակությունից՝ որոշ մեկնիչներ ենթադրում են, որ Նոյեմին այլասերվածությամբ հայտնի հասարակական տան սկզբնավորողն է: Նույնիսկ կարծում են, թե հենց նա է գլխավորել «մարդկանց դուստրերին», որոնք «Աստծո որդիներին» տանում էին անկման և հենց դրանով անբարոյականություն սերմանում երկրի վրա, ինչպես կարդում ենք Ծննդոց 6:1–4-ում. «Երբ մարդիկ սկսեցին բազմանալ երկրի վրա, և նրանց դուստրեր ծնվեցին, Աստծու որդիները տեսնելով, որ մարդկանց դուստրերը գեղեցիկ են, նրանցից իրենց համար կին առան: Եվ Տերը՝ Աստված, ասաց. «Իմ հոգին հավիտյան թող չմնա այդ մարդկանց մեջ, որովհետև նրանք մարմնավոր են, և այդ պատճառով նրանք թող ապրեն մինչև հարյուր քսան տարի»: Այդ օրերին երկրի վրա հսկաներ էին ապրում: Ամեն անգամ, երբ Աստծու որդիները մերձենում էին մարդկանց դուստրերին, որդիներ էին ծնում նրանց համար: Դրանք հսկաներ էին, հին աշխարհի անվանի մարդիկ»:

Շարունակելով ընթերցել Կայենի սերնդից Ղամեքին առնչվող սուրբգրային հատվածը՝ հանդիպում ենք չափածո մի հատվածի՝ «Ղամեքի երգ» անունով, որը սեմիտական գրավոր հնագույն ժառանգության բացառիկ նմուշ է՝ մտքի և բանաստեղծական ներշնչանքի զուգադրությամբ: Սեմիտական պոեզիայի այս գոհարը (Ծնն. 4:23) որոշ ուսումնասիրողներ համարել են ողջ համաշխարհային գրականության ամենահին գրավոր հուշարձանը:

«Լսե՛ք ինձ, Ղամեքի՛ կանայք, ակա՛նջ դրեք իմ խոսքերին: Մի մարդու սպանեցի, որ ինձ վերք էր հասցրել, մի երիտասարդի, որ ինձ հարվածել էր» (Ծնն. 4:23): Արդի մեկնիչների մեծ մասը հակված է պաշտպանելու այն միտքը, ըստ որի՝ այս հատվածում օգտագործվող «սպանեցի» բայի անցյալ ժամանակն օգտագործված է ապառնիի փոխարեն՝ իր կողմից կատարվելիք գործողության կասկածից վեր լինելն ու իր հանդուգն ու ինքնագոհ արարքը շեշտադրելու համար. ասել է թե՝ «Ես անկասկած կսպանեմ, միևնույն է թե՝ արդեն սպանել եմ»:

Բնագրի բնույթի այսպիսի հայեցակետից ելնելով՝ Ղամեքի ամբողջ երգն ստանում է սրին ուղղված մարտաշունչ հաղթական օրհներգի նշանակություն: Հիացած որդու՝ Թոբելի արյունաբեր գյուտով, Ղամեքն իր կանանց առաջ մեծամտաբար պարծենում է այդ նոր գյուտով, ահեղ հայտնագործությամբ, որը տալիս է նրան բռնակալի և տիրակալի կեցվածք, ինքնապաշտպանության հզոր լծակներ:

Նշանավոր ռուս փիլիսոփա, աստվածաբան Վ. Ս. Սոլովյովն այս հատվածի մասին գրել է. «Այսպիսով՝ մեզ հասած պոեզիայի հուշարձաններից ամենահինը Աստվածաշնչում վերարտադրված Կայենի թոռ Ղամեքի արյունոտ երգն է, ինչը համակված է ոչ թե նյութականի անհրաժեշտությամբ, այլ վայրագ չարությամբ և մոլի ինքնահավանությամբ»:

Թեև Ադամն ու Եվան ի վերջո մահացան, Աստված թույլ տվեց նրանց երկուսին էլ ապրել անկումից հետո: Նմանապես, Աստված նաև պահպանեց Կայենի կյանքն այն բանից հետո, երբ նա սպանեց Աբելին. Աստված նշան դրեց նրա վրա, որ ցանկացած մեկին հետ պահի բռնություն գործադրելուց՝ Աբելի վրեժը լուծելու համար: Ղամեքի՝ կյանք խլելու պատրաստակամությունը ցույց է տալիս Աստծո պատկերով ստեղծված էակների հանդեպ բռնություն գործադրելու դիվական մարմաջը:

Ջեյմս Տիսո. Կայեն և Աբել, 1900 թ.

Ղամեքը նաև առաջին մարդն է, որ բացահայտորեն հաստատել է իր մեղքը: Եդեմի պարտեզում և՛ Ադամը, և՛ Եվան փորձեցին ուրանալ իրենց մեղքը՝ այն բարդելով մեկ այլ կողմի վրա: Կայենը նույնպես փորձեց քողարկել իր եղբոր սպանությունը՝ ստելով Տիրոջը: Թեև Կայենը կեղծավոր էր, բայց ընդունեց Աստծո բարոյական օրենքը՝ փորձելով անմեղ երևալ, երբ Աստված առերեսվում էր նրա հետ: Երբ առաջին անգամ անդրադառնում ենք Ղամեքին, մենք չենք տեսնում նրա կողմից իր մեղքը թաքցնելու փորձ: Ընդհակառակը՝ նա բացահայտ հայտարարում է դրա մասին. ավելին, Ղամեքը ոչ միայն բացահայտորեն ընդունում է մարդու սպանության իր դաժան արարքը, այլ նաև բանաստեղծություն-երգ է պատրաստում՝ կարծես ի հիշատակ իր գործածի: Նման ամբարտավանությունը բացահայտում է մի մարդու, որ իր օրենքներն ու չափանիշները վեր է դասում Աստծուց: Ղամեքի բանաստեղծության մեջ կա առնվազն երկու բան, որոնք ընդգծում են նրա ամբարտավանությունը: Առաջին՝ անհամաչափ արձագանքը: Ղամեքը վիրավորվել էր մի երիտասարդի կողմից, և նա վրեժ լուծեց՝ խլելով երիտասարդի կյանքը: Այս բացահայտ չափազանցված արձագանքն արդարամիտ չէր. դա սպանություն էր: Երկրորդ. Ղամեքը ցույց է տալիս իր դաժան արարքը. ասես դրանով փառք է ձեռք բերել: Նա բացականչում է. «Եթե Կայենի վրեժը յոթնապատիկ առնվի, ապա Ղամեքից՝ յոթանասուն և յոթ անգամ» (Ծնն. 4:24): Հարկ է նշել, որ Աստված պաշտպանեց Կայենի կյանքը՝ ասելով, որ յոթնապատիկ վրեժ կլուծի Կայենին սպանողներից (Ծնն. 4:15): Ղամեքն իրեն Աստծուց վեր դասեց՝ ասելով, որ իր անունով իրականացված վրեժը գերազանցում է Կայենի վերաբերյալ Աստծո կողմից նախազգուշացված վրեժխնդրությունը:

Ղամեքը ծառայում է որպես նախազգուշացում, բայց նաև արտացոլում է մեղավոր սրտի հայելային անդրադարձը: Մեծամտությունը, որը հոմանիշ է հպարտությանը, բոլոր մեղքերի արմատն է, որը ճյուղավորվում է ամբարիշտ մեղավորի սրտից: Գոռոզամտությունը մարդու հայացքն ուղղում է դեպի ներս՝ փնտրելու բարոյական դատողություն և խորհուրդ՝ հիմնված իր իսկ ըմբռնման վրա, այլ ոչ թե Աստծո: Մեղավորները ամբարտավանությամբ ստեղծում են կուռքեր իրենց սրտերում: Սա նրանց սուզում է խավարի մեջ՝ հեռու Աստծո լույսից: Այն անտեսում է մարդու կյանքի վրա դրված աստվածային սահմանափակումները, որոնք պահպանում են Աստծո կողմից մեզ տրված անարատությունը:

Սուրբ Գրքում հիշատակվող մյուս Ղամեքը հանդիպում է Ծննդոց 5-րդ գլխում: Այս Ղամեքը Սեթի ժառանգն էր և ոչնչով նման չէր Կայենի սերնդի Ղամեքին: Ծննդոց 4-ի վերջին երկու համարները հիմք են եղել Ադամի հետնորդների համար, որոնք հետագծվել են Սեթի միջոցով: Սրանք այն մարդիկ էին, որոնք «սկսեցին կանչել Տիրոջ անունը» (Ծնն. 4:26): Կայենականները ճանաչվեցին քաղաքակրթության մեջ իրենց առաջընթացի համար, մինչդեռ սեթական ժառանգներն առանձնացան (և ավելի բարձր) այն հանգամանքով, որ նրանք կրեցին Ադամի աստվածային օրհնությունը՝ հավատարմորեն կրելով Աստծո պատկերը (Ծնն. 5:1–3): Ծննդոց 5-րդ գլխում հիշատակված Ղամեքը Նոյի հայրն էր, որ Աստծո կողմից հավանություն էր ստացել՝ մարդկությանն աստվածային բարկությունից փրկելու ծրագրում:

Կայենի հետնորդների պատմություններին ծանոթանալով՝ նկատելի է, որ քաղաքակրթության տարբեր առաջընթացներ են արձանագրվում. կառուցվում է առաջին քաղաքը, հորինվում են երաժշտական գործիքներ, նյութական մշակույթի ծավալն է ընդարձակվում: Այնուամենայնիվ, սա նշանակություն չուներ, քանի որ այն մարդկությանն ավելի չմոտեցրեց Աստծուն: Հաճախ հասարակության առաջընթացը հնարավորություն է տալիս մարդկանց ավելի մեծ մեղքեր գործելու:

Նարեկ սրկ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
ՕՖԵԼՅԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Հայերեն լույս է տեսել Ս. Գրիգոր Նազիանզացու «Աստվածաբանական ճառեր» գիրքը



Ընթերցասիրությունն ինչի հետ ասես չեն համեմատել. համաձայն եմ վարակիչ հիվանդություն բնորոշմանը: Ինչքան էլ զբաղված ու հոգնեցուցիչ լինի օրդ, միևնույն է, գրքի, մանավանդ հոգևոր գրքի համար ժամանակ միշտ գտնվում է, փա՛ռք Աստծու:

Պատկերացրեք ուրախությանս անչափությունը, երբ օրեր շարունակ քիչ-քիչ կարդում, վայելում եմ մաքրամաքուր մի հրատարակություն՝ Ս. Գրիգոր Նազիանզացու «Աստվածաբանական ճառեր» գիրքը (ռուսերենից թարգմանել ու ծանոթագրել է Գրիգոր Դարբինյանը, նվիրված է Արցախյան 44-օրյա պատերազմի մասնակից, անհայտ բացակայող Հովհաննես Ծատուրյանին): Գրքում ներկայացված են 4-րդ դարի նշանավոր հոգևոր գործչի ճառերը:

Գիրքն ստանալուն պես բառացիորեն թաղվեցի նրա մեջ. մատիտով քանի՞ տեղ եմ նշում արել լուսանցքներում՝ Շքե՛ղ է, կամ հատուկ նշան արել, որ անպայման արտագրեմ հատվածները, մի քանի տեղ էլ մտորել՝ հույս ունենալով, որ կկարողանամ խորհրդակցել հոգևոր դաշտի որևէ ներկայացուցչի հետ՝ հասկանալու չհասկացածս:

Նպատակս ամենևին էլ գիրքը գովազդելը չէ, այլ պարզապես գրքից մի քանի բացառիկ հատվածներ մեջբերելու միջոցով ուրախությունս բազմապատկելը, ընթերցողիս մտածելու լրացուցիչ առիթ ու նյութ տալը:

Այսպես՝ «Ընդդեմ եվնոմիոսականների և Աստվածաբանության մասին՝ առաջին կամ նախնական» (Ճառ ԻԷ) գլխում, լավ հասկանալով «հակառակության խոսքեր ու խնդիրներ առաջացնելու հիվանդությամբ» տառապող տհասների հեռահար նպատակները, Սուրբ Գրիգոր Նազիանզացին տասը դիպուկ ու անառարկելի փաստարկով հերքում է արիոսականների, հունական հանրահայտ որոշ ուսմունքների գոյության իրավունքը:

«Աստվածաբանության մասին՝ երկրորդ» (Ճառ ԻԸ) գլուխը մի քանի անգամ կարդացի ու աղոթեցի Սուրբ Գրիգորի համար, որը խոսում է Սուրբ Երրորդության մասին՝ առաջնորդությունը թողնելով Հոր բարեհաճությանը, Որդու աջակցությանը և Սուրբ Հոգու ոգեղենացմանը: Սա իմաստուն մարդու՝ Աստծուն ճանաչելու խոսք է, որ լավ գիտի իր ընտրած ճանապարհի դժվարությունների և Աստծու մասին խոսելու գրեթե անհնարինության մասին: Աստծուն մտքով ճանաչելու փորձերը դատապարտված են ձախողման. սահմանափակով հնարավոր չէ ճանաչել անսահմանը:

Մեկը մյուսից հետաքրքիր երեսուն փաստարկ-քննարկումով (որոնցից մի քանիսի դիմաց արձանագրել եմ՝ Մտածել՝ լրացուցիչ մի բան հասկանալու աղոտ հույսով) ներկայացնելով Լեցուցին, Առաջինին ու Միակին, ամենից Գերիվերին ճանաչելու՝ մարդու անպտուղ ջանքերը՝ սուրբ հայրն արձանագրում է իր խոսքի հաղթանակն անգամ այն դեպքում, «եթե բաղձալիից էլ պակաս է» Սուրբ Երրորդության իր գովերգումը: Իսկապես, մեծերին հատուկ են անչափելի ջանասիրությունն ու սահմանափակ գոհունակությունը կատարածից:

«Աստվածաբանության մասին՝ երրորդ, Աստծու Որդու մասին՝ առաջին» (Ճառ ԻԹ) գլխի խորագիրը շատ խոսուն է: Հին հույների մտավարժանքների արդյունք են Աստծու մասին անսկզբության և բազմասկզբության ուսմունքները: Ահա դրանց հակիրճ, բայց սպառիչ հերքումը. առաջինն անկանոն է, երկրորդը՝ վրդովեցուցիչ, նաև՝ անսկզբունք և անկանոն. «Թե՛ մեկը, թե՛ մյուսը հանգեցնում են միևնույն վախճանին՝ անկարգության, իսկ անկարգությունը փլուզման նախավարժանքն է»:

Սուրբ Գրիգորի հեռավար զրույցը Սուրբ Երրորդության մասին գրքի այս հատվածում պարզապես մտքի ու խոսքի հրավառություն է՝ իմաստուն խրատից, Սուրբ Գրքից տասնյակ մեջբերումներից մինչև... հումոր, իսկ 20-րդ և 21-րդ կետերը կամ ամբողջությամբ պիտի մեջբերել, կամ, ցավ ի սիրտ, շրջանցել: Ս. Գրիգոր Նազիանզացին, Աստվածաշնչից տասնյակ մեջբերումների համադրությամբ, բառերի ու զգացմունքների մի համանվագ է ստեղծում, ու հոգուդ մեջ հնչում են անմահ Պատարագի հնչյունները:

«Աստվածաբանության մասին՝ չորրորդ, և Աստծու Որդու մասին՝ երկրորդ» (Ճառ Է), «Աստվածաբանության մասին՝ հինգերորդ, Սուրբ Հոգու մասին» (Ճառ ԼԱ) գլուխները պիտի կարդաս ու կարդաս՝ աղաջուր խմող ծարավ մարդու պես...

Սուրբ Գրիգորը, թվարկելով Աստծու Որդու անվանումները՝ Միածին, Բան, Իմաստություն, Զորություն, Ճշմարտություն, Պատկեր, Լույս, Կյանք, Արդարություն, Սրբություն, Փրկություն, Հարություն, սրանց կողքին նաև՝ Մարդ, Մարդու Որդի, Քրիստոս, Ճանապարհ, Դուռ, Հովիվ, Ոչխար, Գառ, Քահանայապետ, խորհուրդ է տալիս ընթերցողին. «Քո առաջ են Որդու անվանումները: Ընթերցի՛ր դրանցով, իսկ եթե բարձր են, ընթերցի՛ր աստվածաբար, եթե մարմնական են, ապա՝ ստորաքարշորեն: Բայց ավելի լավ է ասել՝ միանգամայն աստվածաբար, որպեսզի դու ևս Աստված դառնաս՝ երկրից վեր բարձրացած, հանուն մեզ ի վերուստ Իջածի միջոցով: Իսկ ամենից առավել և նախևառաջ հետևի՛ր ասվածին և չես սխալվի բարձր ու ցածր անունների հարցում: Հիսուս Քրիստոս նույնն է երեկ և այսօր մարմնապես, նույնպես հավիտյան (Եբր. ԺԳ. 8) հոգևորապես, ամեն»:

Գրքի վերջին գլխում, երեսուներկու ենթակետով քննելով առաջադրված խնդիրը, Ս. Գրիգոր Նազիանզացին գրում է. «Ի վերջո, եկա այն եզրակացությանը, որ ամենից ճիշտն այս բոլոր պատկերներից և ստվերներից հրաժարվելն է՝ իբրև խաբուսիկ և բնավ ճշմարտությանը հասու չլինող օրինակներից, առավել բարեպաշտ մտածելակերպի հետամուտ լինելը՝ կանգ առնելով մի քանի խոսքի վրա, Հոգով առաջնորդվելն ու Նրանից ստացած լուսավորումով հենց դա էլ մինչև վերջ պահպանելը և այդու՝ իբրև անկեղծ գործակցի և զրուցակցի հետ ներկա ժամանակով անցնելը և ըստ կարելվույն՝ նաև ուրիշներին համոզելը, որ երկրպագեն Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն՝ մի Աստվածությանը և մի Զորությանը: Աստծուն փառք, պատիվ, իշխանություն հավիտյանս հավիտենից. ամեն»:

Ես ինձ համար կրկին ու կրկին բացահայտեցի հին ճշմարտությունը՝ երանի՛ այն օրերին, երբ Մայրավանք Պատարագի էինք գնում Հերիքնազ տատիկի հետ՝ ինը թոռներով, վերադարձին Անուշավան պապիկի հետ տնական ու անմոռանալի համ ունեցող ուտելիքներով ծանրաբեռնված սեղանի մոտ նստելու, նրա աննման երգերը վայելելու հաճույքի կանխազգացումով: Հաստատ գիտեմ՝ տարիների հետ չեմ իմաստնացել, բայց, փա՛ռք Աստծու, հոգուս խորքում դեռ կա, ապրում է Մայրավանքի սյուներից մեկի մոտ Պատարագ վայելող ծնկաչոք տատիկիս կենդանի պատկերը, որ չանհետացավ անգամ Տաճարի նորոգումից հետո: Ու սրա կողքին կա այն գիտակցումը, որ երեսուն տարի առաջ կլինիկական մահվան ապրումները դեռ թրթռում են հոգուս խորքում՝ ստիպելով խոստովանել՝ վախենում եմ, որ մեր խառն ու խառնակ կյանքը, կարդացածս գրքերն ինձ հեռացրել են հավատի այն մաքրամաքուր ակունքներից, որոնց այնպե՛ս նվիրված էին տատիկ-պապիկներիս ու ծնողներիս սերունդները:

Հույսս Աստված է...

Մարգարիտա ԽԱՉԱՏՐՅԱՆ, բ. գ. դ.

Սարկավագի հանդերձանքն ու հարակից ծիսական պարագաները

⬅ էջ 6

«Աստվածային և երկնային շնորհը, որ միշտ լցնում է Առաքելական Եկեղեցու սպասավորության համար անհրաժեշտ կարիքները, պետքերը, կանչում է (այստեղ ասվում են ձեռնադրյալի կամ ձեռնադրյալների անունները) դպրությունից սարկավագության՝ իր անձի և ժողովրդի վկայության համաձայն: Ես ձեռքս դնում եմ սրա վրա, դուք բոլորդ աղոթեք, որ սա արժանանա սարկավագության աստիճանին և անարատորեն ծառայի Սուրբ Սեղանի և Աստծո առջև»: Առհասարակ, ձեռնադրության ժամանակ եպիսկոպոսը, իր ձեռքը դնելով նվիրյալի վրա, փոխանցում է Աստծո շնորհներն ու պարգևները:

Այնուհետև աղոթքներից և աստվածաշնչյան ընթերցումներից հետո, համաձայն Մաշտոց ծիսարանի, եպիսկոպոսը նվիրյալին շնորհում է ուրար՝ ասելով. «Ա՛ռ այս մաքուր և սուրբ ուրարը մեր Տեր Հիսուս Քրիստոսի ձեռքից և նրա երեսի առջև սուրբ եղի՛ր բոլոր տեսակի մեղքերի խաբկանքներից....»: Ապա եպիսկոպոսն Ավետարանը տալիս է ձեռնադրյալին՝ ասելով. «Ա՛ռ քեզ իշխանություն՝ ընթերցելու Սուրբ Ավետարանը Աստուծո Եկեղեցում՝ հունկդրություն ողջերի և ննջեցյալների հիշատակի համար»: Ձեռնադրողն ընծայացուին տալիս է բուրվառ՝ ասելով. «Ա՛ռ քեզ իրավունք՝ խնկարկելու և բուրելու անուշահոտություն սուրբ խորհրդի սպասավորության համար»:

Այսպիսով՝ ըստ սարկավագական ձեռնադրության՝ նվիրյալին տրվում է իրավունք՝ Սուրբ Պատարագին Ավետարանի և սկիհի վերաբերում կատարելու: Ի տարբերություն կիսասարկավագի, որը կարող է ձեռք տալ միայն դատարկ սկիհին, սարկավագն իրավունք է ստանում օրհնված նշխարը (մաղզմայի վրա է դրված) և գինին (սկիհի մեջ է լցված) խորհրդանոցից հանդիսավոր կերպով բերելու և մատուցելու քահանային: Նա իրավունք է ստանում Աստծո խոսքն Ավետարանի միջոցով լսելի դարձնելու ժողովրդին՝ ընթերցելով այն բեմից: Սարկավագը դառնում է միջնորդ քահանայի և ժողովրդի միջև: Սուրբ Պատարագներին, ժամերգություններին և սրբազան այլ արարողություններին վերջինս բոլորին հրավիրում է աղոթելու, զգաստանալու, Աստծո խոսքը լսելու: Սարկավագներն իրավունք ունեն հագնելու կապա (պարեգոտ), ֆարաջա (Հայ Եկեղեցու որոշ նվիրապետական կառույցներում, օրինակ՝ Երուսաղեմի հայ պատրիարքությունում սարկավագական ձեռնադրություն չունեցող անձը նույնպես կարող է հագնել ֆարաջա):

Կապան (պարեգոտ) առհասարակ հոգևորականի առօրյա զգեստն է: Բարձրաստիճան հոգևորականների կապան կարող է լինել տարբեր գույնի (մոխրագույն, կապույտ և այլն): Սարկավագներն իրավունք ունեն հագնելու միայն սև կապա:

Պարեգոտը, ինչպես նշվեց, եկեղեցական ամենօրյա զգեստ է, որն իջնում է մինչև ոտքերը: Այն թևատակերին ու մեջքին ծալք է ունենում: Ի տարբերություն ֆարաջայի՝ պարեգոտի թևերը նեղ են: Հագուստը կոճկվում է օձիքի մոտ: Կրծքին գրպան է լինում: Կան նաև պարեգոտներ, որոնց ծայրերն առջևում՝ մեջտեղում, իրար են միանում և կոճկվում են վերից վար:

Ֆարաջան կամ վերարկուն (սքեմ) վերևից ներքև իջնող լայն պատմուճան է՝ առջևը բաց, թևերը լայն, քղանցքներն ընդարձակ. առաջամասը, իրար վրա բերվելով, օձիքի մոտ կոճկվում է: Այս զգեստը հագնում են Հայ Եկեղեցու բոլոր հոգևորականները՝ սարկավագից մինչև կաթողիկոս: Այն օգտագործվում է տարբեր եկեղեցածիսական արարողությունների ժամանակ: Ֆարաջան բոլոր եկեղեցականների համար լինում է սև գույնի: Գունավոր (մանուշակագույն, վարդագույն, կարմիր) աստառներով ֆարաջա օգտագործում են ծայրագույն վարդապետները, եպիսկոպոսներն ու կաթողիկոսները: Ամուսնացյալ հոգևորականների վերարկուի աստառը սև է: Սարկավագները ֆարաջայի վրայից գցում են նաև ուրար, այն հագուստի մի մասն է՝ ուսից ներքև իջնող, երկար չափով: Ըստ Մաղաքիա արք. Օրմանյանի՝ «ուրար» բառը ծագում է լատիներեն «օրարիում» և հունարեն «օրարիոն» բառերից, որը լատինական զգեստի բերան կամ եզերք է նշանակում: Ուրարները երկու տեսակի են լինում՝ սարկավագի և քահանայի: Սարկավագների ուրարը նեղ ու երկար է՝ հազիվ 10—12 սմ լայնությամբ: Այն դրվում է ձախ ուսի վրա՝ հետևից և առջևից հավասար չափով կախվելով: Ուրարները կարող են լինել նաև երկար, օրինակ՝ հանդիսավոր արարողությունների ժամանակ բուրվառակիր սարկավագներն ավելի հանդիսավոր կերպով են այն օգտագործում: Քահանայական փորուրարի մասին կխոսվի հաջորդիվ:

Ուրարը սարկավագի ուսին նշան է Փրկչի կես լուծը կրելուն և խորհրդանշում է սարկավագին տրված շնորհը, որով նա կիսով չափ կցվում է քահանայի պարտավորություններին՝ լինելով նրա առաջին օգնականը և միջանկյալ դեր կատարելով քահանայի և հավատացյալ ժողովրդի միջև, այսինքն՝ սարկավագը Քրիստոսի լուծը միայն կիսով չափ է իր վրա կրում և տակավին կարողություն չունի ամբողջությամբ այն ստանձնելու:

Երբեմն եկեղեցիներում կարող ենք հանդիպել սպասավորների, որոնք շապիկի վրայից ուրար են գցում. վերջիններս կոչվում են ուրարակիրներ: Ուրարակրությունը նվիրապետական աստիճան չէ, այլ վերջին դարերից եկող ավանդություն, համաձայն որի՝ այն դպիրները, որոնք իրենց ծառայությունն են մատուցում եկեղեցում, կարող են եպիսկոպոսի օրհնությամբ դառնալ ուրարակիրներ և ուրար կրել իրենց ձախ ուսին: Այս կարգը կոչվում է ուրարի տվչություն:

Եղիշե սրկ. ՍԱՐԳՍՅԱՆ
Սիրանուշ ԱԴՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristonyahayastan1@gmail.com qristhay@etchmiadzin.am
web կայք՝ krishayas.wordpress.com etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 16.07.2025 թ.
Տպաքանակը՝ 1265